

№2 (7)



ՀԱՐՈՒՄ

ՀԱՐՄԱՆՄԱՆ

491.99-8  
112-25

ՀԱՐՄԱՆ - ԳՐԱԳՐԱԿԱՆ

*[Handwritten signature]*  
1933

Апр. 2-5150/2a

491.99-8  
ML-75

10 MAY 2010

Պրոխարանք բոլոր յերկրների, միացնի

# ՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

**ԺՈՒՐՆԱԼ-ԴԱՍԱԳԻՐՔ**  
ՀՅՈՒՍ, ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ I ԱՍՏ.  
ԴՊՐՈՑՆԵՐԻ III—V ԽՄԲԵՐԻ ՀԱՍԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ Հ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐ-  
ԼՈՒՍՐԱԺՆԻ ՅԵՎ «ՀՅՈՒՍԻՍ. ԿՈՎԿԱՍ»  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻ



Г.П.Б. в ЛНГР.  
Ц. 1933 г.  
АКТ № 357

№ 21388

№ 2 (7)



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎ. ԿԱՍ»  
1933 թ. ՌՈՍՏՈՎ-ԳՈՆ



40613-63



Издательство  
"Северный Кавказ"

### ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Ե

1933 թվի հունվարի 7—12 տեղի ունեցավ Համա-  
միութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության  
Կենտրոնական Կո-  
միտեյի և Կենտրո-  
նական Վերահսկիչ  
Հանձնաժողովի մի-  
ացյալ պլենումը:

Այդ պլենու-  
մում ջննության  
առնվեցին հետևյալ  
հարցերը.

ա) Առաջին հրն-  
գամյակի արդյունք-  
ները և յերկրորդ  
հնգամյակի առաջին  
տարվա ժողովրդա-  
կան տնտեսության  
զլանը (1933 թ.):

բ) Մեքենա-  
արտադրային կա-  
յանների և խորհր-  
դային տնտեսու-  
թյունների քաղա-  
քական բաժինների  
կազմա կ եր պ մ ա ն  
հարցը:

գ) Կոմկուսակցության ներքին կյանքի հարցերը:  
1-ին հնգամյակի արդյունքների մասին զեկուցեց կոմ-  
կուսակցության յեվ բանվոր դասակարգի առաջնորդ ու ղե-  
կավար ընկ. Սալիևը: Մյուս հարցերի մասին զեկուցեցին  
ընկ. ընկ. Մոլոտովը, Կուլբիչեվը, Կազանովիչն ու Ռուձուտսկը:



ԸՆԿ. Ի. Սալիև

# 1. ԱՐԳՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՏԵՄՊ ԱՃԸ ԽՍՂՄ-ՈՒՄ

Առաջին հնգամյակի պլանը, վորը 5 տարվա փոխարեն իրագործվեց 4 տարի և 3 ամիս ժամանակամիջոցում, հնարավորություն տվեց մեր հետամնաց, գերազանցապես գյուղատնտեսական յերկիրը դարձնել տեխնիկապես առաջավոր յերկրներից մեկը և ապահովեց սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում:

Առաջին հնգամյակի ընթացքում կառուցվեցին սեվ (թուջ, պողպատ, յերկաթ) յեվ գունավոր սեսաղի արտադրության հսկաներ, խոշոր գործարաններ՝ Մազնիտոգորսկում, Կուզնեցկատոյում, Ուրալում և այլ տեղերում: Քիմիական նյութերի արտադրության համար բարձրացան Չերնորեզիոյի և Քերեզնիկովի գիգանտները:

Շինվեցին խոշոր հիդրոէլեկտրակայաններ, ինչպես որինասի, Դեսաբոգեսը, Չեյաբինգեսը, Չորագեսը և այլն:

1-ին հնգամյակի ընթացքում բարձրացան, շինվեցին հետևյալ մեքենաշինարարության հսկաները.

Ստալինգրադի, Խարկովի և Պուտիլովի տրակտորի գործարանները:

Գյուղատնտեսության համար բարդ մեքենաների արտադրության գործարանները Ռոստովում (Սեւմաշ), Մարաստվում, Չապորոժայում, Խարկովում:

Ավտոմոբիլների արտադրության հսկաներ են շինված Մոսկվայում, Գորկի, քաղաքում, Ցարոսլավում:

Կառուցվել և վերանորոգվել են շոգեշարժիների և վազոնների արտադրության խոշոր ձեռնարկություններ:

1-ին հնգամյակի ընթացքում մեզ մոտ կառուցվեցին աշխարհում ամենամեծ մետաղաձուլական հալոցներ՝ Ղոմնաներ՝ մարտեններ:


Մեքենաշինարարությունը, վորը յուրաքանչյուր յերկրի տնտեսության պարձանքն է, առաջին հնգամյակում (1928-29-32 թ.) համեմատած 1913 թվի ցարական Ռուսաստանի մեքենաշինարարության հետ, աճել է 10 անգամ:

1-ին հնգամյակի հաջող իրագործման շնորհիվ, մենք ուզումսկանապես շատ ուժեղացանք:

Յեթե մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը պայմանականորեն ընդունենք 100, ապա պետք է ասել, վոր 1927-28 թ. տնտեսական տարում արդյունաբերությունը կազմում էր 48 տոկոս: Այժմ, առաջին հնգամյակի վերջին, արդյունա-

բերության բաժինը ժողովրդական տնտեսության մեջ կազմում է 70 տոկոս, իսկ գնուղատնտեսությանը՝ 30 տոկոս:

1-ին հնգամյակի ընթացքում, Խորհրդային Միության մեջ, յուրաքանչյուր տարում արդյունաբերության միջին աճը հավասար է յեղել 22 տոկոսի: Այսպիսով Խորհրդային Միության արդյունաբերությունն ունեցել է զարգացման շատ բարձր թափ, վորը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության վողեորված աշխատանքի արդյունքն է: Ահա մեր զարգացման պատկերը:



Արդյունաբերության վիճակը 1932 թվի վերջին՝ համեմատած 1928 թվի հետ (1928 թ. ընդունել վազպես 100):

Այս դիագրամը ցույց է տալիս, թե ինչպես մեր յերկրում ծաղկում է տնտեսությունը, մեզ մոտ արագ թափով զարգանում է սոցիալիզմը, իսկ բուրժուական յերկրներում ընդհակառակը, քայքայվում է վողջ տնտեսությունը:

# 2. ԽՍՀՄ-Ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑ. ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Մեր արդյունաբերության զարգացման շնորհիվ և նրան զուգընթաց՝ սեղծված են սոցիալիստական խոշոր ձեռնարկություններ գյուղատնտեսության մեջ:

Առաջին հնգամյակում քաղաքը գյուղին տվել է 1 միլիարդ 600 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, գա-

հարավորութիւնն տվեց մանր ու անհատական տնտեսութիւնները միացնել և ստեղծել կոլեկտիվ սոցիալիստական տնտեսութիւններ:

Վերջին չորս տարիների ժամանակամիջոցում մեր կառավարութիւնը հիմնել է 2446 մեքենա-տրակտորային կայաններ: Այս կայանները զինված են առաջավոր գյուղատնտեսական մեքենաներով, ոգնում են կոլտնտեսութիւններին:

Վերջին յերեք տարիների ընթացքում կազմակերպվեցին 200,000 կոլեկտիվ տնտեսութիւններ:

Այդ կոլտնտեսութիւնների մեջ մտած է ԽՍՀՄ-ի աշխատավոր գյուղացիութեան 60 տոկոսը:

Կազմակերպված են 5000 խորհրդային տնտեսութիւններ, վորոնք զբաղվում են հացահատիկի և կուլտուրական բույսերի մշակութամբ և անասնատնտեսութեամբ:

Գյուղում սոցիալիզմի կառուցումը կատարվում է՝ շնորհիվ այն հանգամանքին, վոր մեր յերկրի աշխատավորությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ ցնեստապետ ու քաղաքականապես ջախջախեց կուլակությանը: Բայց այդ ջախջախում կուլակները իրենց վերջին ուժն են գործ դնում տապալելու, քայքայելու կոլտնտեսութիւնները: Կուլակները շատ լավ են հասկանում, վոր քայքայելով կոլտնտեսութիւնները, թուլացնում են մեր իշխանութեան ամբողջութիւնը և հող են պատրաստում բուրժուական կարգերի վերա հաստատման համար:

Գյուղում սոցիալիստական ձևերի տնտեսութիւններ կազմակերպելու և զարգացնելու հետևանքով, մեր պետութիւնը մեծ քանակութեամբ ապրանքային հաց ստացավ: 1927—28 թ. պետութիւնը մթերեց 700 միլիոն փութ հացահատիկ, իսկ 1931—32 տարում 1 միլիարդ 400 միլիոն փութ, այսինքն կրկնակի անգամ ավելի:

Կոլտնտեսութիւնների և խորհտնտեսութիւնների միջոցով զարգացավ մեր անասնապահութիւնը:

Կապիտալիստական յերկրների արդյունաբերութեան քայքայման հետ միասին քայքայվել է նաև գյուղատնտեսութիւնը, աղքատացել և ծանր դրութեան մեջ են գտնվում բուրժուական յերկրների աշխատավոր գյուղացիները:

**ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ**

Արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան զարգացման հետևանքով մեր յերկրում շուկայից դուրս շարտվեց մասնա-

վոր առևտուրը, սպեկուլյացիան: Ծավալվեց խորհրդային առևտուրն ու ապրանքաշրջանառութիւնը: Կոշիկները, մանուֆակտուրայի և նման լայն սպառման իրերի արտադրութիւնը առաջին հնգամյակի ընթացքում աճեց 187 տոկոսով՝ 1925 թ. համեմատութեամբ: 1929 թվի հետ համեմատած՝ շատացել են կոտպերատիվ խանութները 158,000-ով: Խորհրդային առևտրի նման զարգացումը բարելավում է քաղաքի և գյուղի աշխատավորութեան նյութական և կենցաղային դրութիւնը:

**ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան զարգացման հետ միասին, բարելավվում է բանվորների և գյուղացիների տնտեսական ու կուլտուրական դրութիւնը:

Մոտ 10 միլիոն նոր մարդ են անցել արդյունաբերութեան մեջ աշխատելու թե քաղաքում և թե գյուղում: Մեզ մոտ արդեն յերկու տարի յե, ինչ վերացվել է գործազրկութիւնը:

Արդյունաբերական բանվորների և ծառայողների աշխատավարձը առաջին հնգամյակում ավելացավ 67 տոկոս՝ 1928 համեմատութեամբ: Մեր արդյունաբերական ձեռնարկութիւնների մեծ մասը անցել է 7 ժամյա բանվորական օրվա:

Հակառակ այս բոլորին, բուրժուական յերկրներում կան 40 միլիոն գործազուրկներ: Յեղած դպրոցների զգալի մասը փակվել է և յերեխաները փողոց են շարտվել:

**3. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ (1933 թ.) ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ**

Մեր յերկրի ժողովրդական տնտեսութեան զարգացումը կանգ չի առնում. նրա արագ առաջխաղացումը ապահովելու համար. նախատեսվում է 1933 թ. ավելացնել արդյունաբերութեան արտադրանքը 16 ու կես տոկոսով, համեմատած 1932 թվի հետ:

1933 թվին պետք է արտադրվի՝

ա) Ելեկտրոններգիա	16.300 միլիոն կիլովատ ժամ
բ) Քարածուխ	84 միլիոն տոնն
գ) Նավթ	24 միլիոն 400 հազար տոնն
դ) Թուջ (չուգուն)	9 միլիոն տոնն
յե) Պողպատ	9 միլիոն տոնն

Քեքենային արարությունը պիտի տա 6,5 միլիարդ ուսուցում արտադրանք  
 Բիմիական արդյունաբերութիւնը՝ 1.839 միլիոն ուսուցում արտադրանք  
 Քեքենայ արդյունաբերութիւնը՝ 8,8 միլիարդ ուսուցում արտադրանք  
 Մենդարդյունաբերութիւնը՝ 7,7 միլիարդ ուսուցում արտադրանք  
 Անտառարդյունաբերութիւնը՝ 2.072 միլիոն ուսուցում արտադրանք  
 Արտադրական կոպերացիան՝ 7.920 միլիոն ուսուցում արտադրանք  
 Գյուղատնտեսութեան դժով 1933 թվին պիտի ցանկի.

- ա) 95 միլիոն հեկտար գարնանացան և 38,5 միլիոն հեկտար աշնանացան.
- բ) Բամբակ 2 միլիոն հեկտար
- գ) Ճակնդեղ 1,2 միլիոն հեկտար
- դ) Վուշ 2,3 միլիոն հեկտար.

Պորնտնտեսութիւնների և անասնապահական ապրանքային ֆերմաների անասունների քանակը 1933 թվին պիտի լինի.

- ա) Պտուղ յեղջուրավոր անասուններ 8.550.000 գլուխ
- բ) Կով 3.662.000 գլուխ
- գ) Սոզ 5.200.000 գլուխ
- դ) Վոշխար 10.545.000 գլուխ.

Աշխատավորների նյութական և կուլտուրական կարիքներն պահանջները բավարարելու համար պետք է 1933 թվին բարձրացվի աշխատավարձը 6,8 տոկոսով, իսկ արդյունաբերութեան մեջ աշխատողների աշխատավարձը՝ 9 տոկոսով ավելանա: Բնակարանային շինարարութեանը արվում է 1 և կես միլիարդ ուսուցում 1933 թվին կուլտիկնցադային ծախքերը, համեմատած 1932 թվին հետ, ավելանալու յեն 20 տոկոսով:

Սակայն մի հանգամանք պետք է քաջ գիտենալ. ինչպես անցյալ տարիներին, այնպես էլ 2-րդ հնդամյակի ընթացքում բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիութեան առաջ կանգնած են յեղել և կլինեն մեծ դժվարութիւններ: Կուլակները, սպեկուլյանտները, հոգևորականները, նախկին սպաները յարելու յեն իրենց վերջին ուժերը, մեր ձեռնարկած մեծ աշխատանքները խանգարելու համար:

Բանվոր դասակարգի թշնամիներին ոգնում են կոմկուսակցութեան և կոմյերիտիութեան անդամներից անկայունները, դժվարութիւններից վախեցողները: Իրանք կոմկուսակցութեան տոմար գնելով իրենց զբոսանք՝ ոգնում են կուլակներին: Այդ պատճառով էլ Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի միացյալ հուշարարյան պլենումը կուսակցու-

թեան շարքերից հեռացրեց մի շարք կոմունիստներ և խնդիր դրեց 1933 թվին վախկոտներին, բանվոր դասակարգի գաղաճաններին զտել, հեռացնել կուսակցութիւնից:

Ընկ. Կազանովիչը գեկուցեց՝ գյուղում աշխատանքներն ավելի ուժեղացնելու մասին: Վորոշված է խորհրդային տնտեսութիւններում և մեքենա-տրակտորային կայաններում կազմակերպել քաղաքական բաժիններ:

Այդ բաժինների անմիջական խնդիրներն են՝ կարճ ժամանակամիջոցում աշխատանքների միջից վերացնել այն թերութիւնները, վորոնք յեղել են մինչև այժմ:

Կոմունիստական կուսակցութեան առաջնորդ և ղեկավար ընկեր Սաալինը Կենտրոնական Կոմիտեյի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումում խոսեց այն մասին, վոր գյուղի մեր աշխատանքների մեջ կան հինգ գլխավոր բացեր: Ընկեր Սաալինն այդ թերութիւնների մասին ստեց հետևյալը.

1. Գյուղում աշխատող կոմունիստ ընկերները չեն կարողացել լավ հասկանալ կոլտնտեսային առևտրի նշանակութիւնը, վորի հետեանքով շատ կոլտնտեսութիւններ և մենատնտես գյուղացիներ, ընկնելով կուլակների պրոպագանդային ազդեցութեան տակ, դեռ չկատարած պետութեան հացամթերման պլանը, փաստորեն հրաժարվել են հացը տալ պետութեանը, վորպեսզի բարձր գներով վաճառեն շուկայում:

2. Վոր գյուղի թե կուսակցական և թե խորհրդային աշխատողները չեն կարողացել հասկանալ ու ըմբռնել, վոր կազմակերպելով կոլեկտիվ տնտեսութիւններ՝ պահանջված չափով պետք է ղեկավարել դրանց: Կոլտնտեսութիւնների աշխատանքները շատ տեղերում վատ ղեկավարելու հետեանքով, մի շարք կոլտնտեսութիւններ կուլակների կողմից ոգտագործվել են իրենց շահերի համար:

3. Յերրորդ թերութիւնը ընկեր Սաալինը համարում է այն, վոր շատ կոմունիստ աշխատողներ, կազմակերպելով կոլեկտիվ տնտեսութիւններ, կարծել են, թե արդեն ամեն ինչ արվեց, չհասկանալով, վոր ավելի շատ աշխատանք է պահանջում ամրացնելու կոլտնտեսութիւնները թե կազմակերպչորեն և թե տնտեսապես: Այսպիսով գյուղի մի շարք կոմունիստ աշխատողներ չեն ոգնել կոլտնտեսութիւններին՝ հեռացնելու կոլտնտեսութիւններում խցկված կուլակին, հակահեղափոխականներին, վորոնք թուլացրել են շատ կոլտնտեսութիւններ:

4. Ընկեր Սաալինն ասում է, վոր մեր գյուղի աշխատողների մի մասը չի կարողացել տեսնել ու հասկանալ կուլակին,

վերջինիս զինակիցներին, վորոնք զանազան անվան տակ մտել են կողմնատեսութիւն և քայքայում են այդ տնտեսութիւնները ներսից:

5. Հինգերորդ. գյուղի վատ աշխատանքների պատճառը ընկեր Ստալինը համարում է այն, վոր հացամթերումների ընթացքում գյուղի շատ կոմունիստներ լավ չեն աշխատել: Նրանք թերազնահատել են պետութիւն հացամթերման պլանի լրիվ կատարումը, վորը խոշոր քաքաքական և տնտեսական նշանակութիւն ունի:

Բոլորս համախմբվենք ընկ. Ստալինի ասածների և կոմունիստական կուսակցութիւն վորոշումների շուրջը, լավ օւսումնասիրենք նրա վորոշումները և պայքարենք նրանց իրագործման համար:

**1-ԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ  
ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՆ Ե**

## ՓԵՏՐՎԱՐԸ

Անցավ պատերազմի յերկրորդ տարին: Յե՛վ ի՛նչ. ճանաչել կարելի չեր վոչ բանվորներին, վոչ գյուղացիներին և վոչ եր զինվորներին. նրանք բոլորովին փոխվել էյին: Այդ տեսնում էյին բոլորը:

Մինիստրների խորհրդի նիստում կոմս Իգնատիյե՛վն ասաց. — Բանակը դադարել է բանակ լինելուց. նա զինավաճված ժողովուրդ է այսոր:

Յե՛վ ճիշտ վոր, բանակն առաջվանը չեր այլևս: Պատերազմի յերկու տարում զինվորների աչքերը բացվեցին. նրանք լավ հասկացան՝ ինչ բան է պատերազմը և ինչի համար է նա տարվում: Բանակումն արդեն գործ էյին տեսնում բոլլե՛րիկները. նրանք պատմում էյին զինվորներին պատերազմի իսկական նպատակների մասին: Ու զինվորները չէյին ուզում այլ ևս կովել: Թագավորի նախկին հլու և հնազանդ բանակը կամացկամաց հեղափոխական տրամադրութիւններով տոգորված զինված ժողովուրդ էր դառնում:

Մինիստրներն արդեն գգում էյին մոտալուտ հեղափոխութիւնը: Մինիստրների խորհրդի նիստերից մեկում սկսեցին մեղադրել ներքին գործերի մինիստրին, վոր նա հարկավոր միջոցներ չի գործադրում հեղափոխութիւնը ընում խեղդելու համար:

— Ի՛նչպես եք կամենում դուք, պատասխանեց մինիստրը, — վոր յես կովեմ որեց-որ աճող հեղափոխական շարժման դեմ, քանի վոր ինձ մերժում են գորք տալ: Ինձ ասում են, վոր գորքի վրա հուսալ կարելի չէ այլ ևս, վոր նրանք ել չեն կրակի ամբոխի վրա: Յես հո չեմ կարող միայն վոստիկանների (գորողովոյների) ձեռքով խաղաղութիւն հաստատել ամբողջ Ռուսաստանում:

Մինիստրներն անգամ զգուժ եյին արդեն, վոր զինվորներն ամբողջի, այսինքն բանվորներն վրա ալ ևս չեն կրակի:

1916 թվի հոկտեմբեր ամսին Պետրոգրադում գործադուլ արին 187 հազար բանվորներ:

— Կորչի պատերազմը:

— Կորչի ինքնակալութիւնը:

— Հաց ենք պահանջում, — գրված էր բանվորական բազմաթիւ դրոշակներն վրա: Ու յերբ վոստիկանութիւնը հարձակվեց ցուցարար բանվորներն վրա, վոստիկաններն զեմ զուրս յեկան զինվորները: Բանից զուրս յեկավ, վոր ամբողջ 181-րդ գումարն անցել էր գործադուլավորներն կողմը և վորոշել էր պաշտպանել նրանց:

Ամենքն էլ դժգոհ եյին թագավորից: Բանվորները, գյուղացիներն ու զինվորներն առում եյին թագավորին նրա համար, վոր նա պատերազմ սկսեց և էլ չի ուզում վերջ տալ նրան: Կապիտալիստներն ու կալվածատերերն անբավական եյին, վոր թագավորը լավ չի տանում պատերազմը, վոր նա անխելք մարդկանց մինիստր է կարգում:

Յեւ դրա համար, յերբ 1917 թ. փետրվար ամսին ապրտամբեց Պետրոգրադի քաղաքապահ զորքը և գործադուլ հայտարարեց բանվորութիւնը՝ պահանջելով թագավորի գահընկեցութիւնը, կապիտալիստները, կալվածատերերը և բանկիրները չափազանց ուրախացան և վորոշեցին ոգտվել հանդամանքից ու ձեռք գցել իշխանութիւնը:

Այդ որերին թագավորը գտնվում էր զորքերի գլխավոր հրամանատարի կայանում, Մոզիլիւ կոչվող փոքրիկ քաղաքում: Յերբ նա իմացավ Պետրոգրադի ապստամբութեան մասին, կանչեց իր մոտ գեներալ Իվանովին:

— Վերցրեք ինձ հավատարիմ զինվորներէից մի շարան, գնացեք Պետերբուրգ ու ճնշեցեք ապստամբութիւնը:

Գեներալն ուղեւորվեց: Հասավ նա իր զորքերով մինչև Յարսկոյե Սելո (այսպես էր կոչվում այն ժամանակ այսորփա Դեսսկոյե Սելոն): Այդտեղից մինչև Պետրոգրադ 25 վերստ էր:

Ճանապարհը շարունակելուց առաջ, գեներալը հեռախոսին և կանչում Պետրոգրադի զինվորական շրջանի հրամանատար գեներալ Սաբալովին:

Նրանց հեռախոսով ունեցած խոսակցութիւնը զրի յետնված այսպես:

Գեն. Իվանով. Ասացեք, վոր պորամասերն են իրենց կարգին պահում և վորո՞նք են անկարգութիւն անողները:

Գեն. Սաբալով. Իմ տրամադրութեան տակ ձեռք եմ չորս զվարդիական վաշտ (սոտա), հինգ հեծելավաշտ, յերկու հրետանի: Մնացած զորքերն անցել են հեղափոխականներն կողմը: Անհատ զինվորներ ու սրիկաների խմբեր թափառում են փողոցներում և զինաթափ են անում սպաներին:

Գեն. Իվանով. Վոր կայարանները պահպանվում են:

Գեն. Սաբալով. Բոլոր կայարաններն էլ գտնվում են հեղափոխականների ձեռքում ու շատ խնամքով պահպանվում են:

Գեն. Իվանով. Քաղաքի վոր մասերում կարգը պահպանվում է:

Գեն. Սաբալով. Ամբողջ քաղաքը հեղափոխականների ձեռքումն է, հեռախոսը չի գործում, քաղաքի մասերի հետ կապը խզված է:

Գեն. Իվանով. Ի՞նչ իշխանութեան ձեռքումն են գտնվում քաղաքի այդ մասերը:

Գեն. Սաբալով. Պատասխանել չեմ կարող:

Գեն. Իվանով. Արդյոք բոլոր մինիստրութիւններն էլ աշխատում են:

Գեն. Սաբալով. Մինիստրները ձերբակալված են հեղափոխականների կողմից:

Գեն. Իվանով. Վոստիկանական վոր մասերը ներկայումս գտնվում են ձեր ձեռքում:

Գեն. Սաբալով. Յեւ վոչ մեկը:

Գեն. Իվանով. Արդյոք վորքան զենք, հրետանի ու քաղամամթերք կարողացել են ձեռք գցել ապստամբները:

Գեն. Սաբալով. Հրետանիների բոլոր մասերն էլ հեղափոխականների ձեռքումն են:

Գեներալ Իվանովն իր զորքերով հետ դարձավ: Պետրոգրադում նա անելիք չունեւ այսուհետև: Հեղափոխութիւնը հաղթանակեց:

Զինվորները շատ շուտ տեղեկացան հեղափոխութեան մասին. իմացան, վոր թագավորը գտնակեց է յեղած և իբր թէ իշխանութիւնը ժողովրդի ձեռքն է անցած:

Զինվորները զուրս եյին գալիս իրենց խրամատներից համբուրվում ու լաց լինում ուրախութիւնից:

— Այսուհետև վերջ՝ պատերազմին: Ել մենք չե՞նք կռվի, հերիք է: Բավական է, ինչքան ձեռքին մեր արյունը: Կեցցե՛ հեղափոխութիւնը: Կորչի պատերազմը:



Գյուղացիներն ել ժողովներ ելին անում ու ծանր ու բարակ ելին անում, թե ինչպես են նրանք իրենց մեջ բաժանելու հողը:

— Բանի վոր թագավորը թախտից գլորված է, քանի վոր իշխանութիւնը ժողովրդին է, նշանակում է՝ հողն ել ժողովրդինն է լինելու: Հողը պետք է պատկանի մեզ՝ գյուղացիներին: Ուրախ ելին և բանվորները:

— Թագավորին քշեցինք, պատերազմը կվերջացնենք ու այսուհետև մեր աշխատանքի արդյունքը մենք կվայելենք և վոչ թե մեր տերերը:

Բայց տեսք, վոր ամեն բան մնաց առաջվա պես: Թագավոր թեև չկար, բայց յերգը նույնը մնաց: Կալվածատերերն ու կապիտալիստներն իշխանութիւնն գլուխ անցնելով, ամեն բան իրենց ուզածի պես ելին կարգադրում:

Առաջներն ասում ելին. «Հավատի, թագավորի և հայրենիքի համար»:

Հիմա յեւ սկսեցին ասել «ազատութիւնն համար»:

Բայց դա ինչ ազատութիւնն է, քանի վոր բանվորի վզին նստած է նույն գործարանատերը, գյուղացու շնքին՝ նույն կալվածատերը, իսկ զինվորին սպանդանոց է քշում նույն սպան և գններալը:

Բոլշեվիկները միշտ ասում ելին աշխատավորներին և զինվորներին—տեսք, կխաբեն ձեզ կապիտալիստները, մի հավատաք նրանց խոսքերին: Նրանց ասածը կատարվեց. հողը նորէն մնաց կալվածատերերի ձեռքում, ֆաբրիկներն ու գործարաններն առաջվա պես կապիտալիստներին բաժին յեղավ, իսկ պատերազմն ել շարունակվում էր:

Կապիտալիստները շատ վարպետութեամբ վարվեցին. նրանք գլխավոր միջոցառում նշանակեցին «սոցիալիստ» կերենսկուն:

Բանվորները, զինվորները և գյուղացիները թող այնպես կարծեն, վոր այս բոլորն անողը կերենսկինն է: Մինչդեռ իրականում կերենսկինն միայն ձեռք համար եր զրկած: Գործերի իսկական վարիչները կապիտալիստներն ելին:

Բոլշեվիկներն այդ բոլորը պարզաբանեցին աշխատավորներին: Բանվորն ու զինվորը պարզ տեսնում ելին, վոր կերենսկինն ել թագավորի պես նույն յերգն է յերգում:

— Պատերազմը շարունակել մինչև հաղթութիւն:

Իսկ բոլշեվիկները, դրան ի պատասխան, ասում ելին:

— Վերջացնել պատերազմը: Պատերազմ պատերազմի դեմ կերենսկին կոչ է անում:

— Հնազանդ յեղեք տերերին, ձեռ մի՛ք տա կալվածատերերին:

Իսկ բոլշեվիկները պահանջում են.

— Ֆաբրիկներն ու գործարանները բանվորներին տալ, իսկ հողը—գյուղացիներին:

Կերենսկին խնդրում է.

— Հավատացեք միջոցառումներին, նրանք լավ մարդիկ են:

Բոլշեվիկները պնդում են.

— Տվե՛ք միջոցառումների վզակոթին: Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին

Ղինվորներն իրենց խրամատներում լսում են բոլշեվիկների ազիտատորներին, կարդում են նրանց լրագրներն ու թուղթիկները:

— Գնանք բոլշեվիկների հետեից, ասում են զինվորները:

Գործարաններում և ֆաբրիկներում բոլշեվիկներն արգեն ստեղծում են կարմիր գվարդիա: Բանվորներին սովորեցնում են հրացաններից կրակել, գնդացիները գործածել:

— Միայն թե ազդանշանը տրվե՛ր,—ասում են բանվորները:—Սփսոս վոր Լենինը չկա...

Իսկ Լենինն այդ ժամանակ արտասահմանումն էր: Նա նույն թվի ապրիլ ամսին վերադարձավ և անցավ հեղափոխութիւնն գլուխը:

Հեղափոխութիւնը զարգացավ. ծագեց Հոկտեմբերը:



# ԿԵՊԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Վտառի յեղան մասսաները  
Առան նրանք զենք ու զրահ  
Ու տասնյոթի են ձմեռը  
Գրոն տվին ցարի վրա:

— Հեյ, իմ զորքեր, — ասաց ցարը  
— Վարտեղ եք դուք, յեղեք կրկին  
Դեմ կանգնեցեք ինչպես սարը  
Խռովարար այդ ամբոխին:

— Չե, այս անգամ ուշացել ես  
Չայնեց մասսան ամենուրեք  
— Բավական ե, ինչ խաբել ես  
Այսոր այն չե, ինչ վոր յերեկ:

Քանի դարեր, ով դու հին գայլ  
Խաբել ես մեզ, պահել հլու  
Ել չենք անի և վոչ մի քայլ  
Փտած գահդ պաշտպանելու:

Շարժվեց ծովը ճնշվածների  
Սրբեց ցարին, տղրուկներին  
Գարզեց կարմիր դրոշակը  
Ճամբա բացեց Հոկտեմբերին:

## ԽՍՀՄ-ՈՒՄ

ԿԱՆԱՅՔ ՏՂԱՍԱՐԴՈՒՆ ՀԱՎԱՍԱՐ ՈՒ ՆՐԱՆՑ ՀԵՏ  
ԿՈՂՔ-ԿՈՂՔԻ՝ ՍՈՑԻԱԼԻՉՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

## ՄԱՐՏԻ 8-Ը

Ամեն տարի մարտի 8-ին տոնվում է բանվորուհու և գեղջիկուհու օրը:

Մարտի 8-ը կանանց սիջազգային օրն է:  
23 տարի յե, ինչ այդ օրը անցկացվում է կանանց ազա-

40613-67




Հասարակական ճառարան

տաղբման, հասարակական և բաղաբական կյանքին մասնակցե-  
լու, աղամարդուն հավասար իրավունքներ ստանալու նշանաբա-  
նի տակ:



Բուրժուական հասարակարգում յեթե բանվորներն ու ընդհանրապես աշխատավորները շահագործվել ու շահագործվում են, ապա կանայք կրկնակի յեն շահագործվել ու շարունակվում են շահագործվել:

Կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք է տարել կանանց ազատագրման համար և այժմ այլ է կանանց դրուժյունը կապիտալիստական հասարակարգում և մեզ մոտ— նՍՀՄ-ում:




Հասարակական լվացարան

Կապիտալիստական հասարակարգում ներկա տնտեսական ճգնաժամն ել ավելի յե վատթարացնում կանանց դրուժյունը: Ծնշված և իրավագուրկ չինը այժմ ավելի յե զգում կապիտալիստական լծի ծանրությունը: Բանվորների կրճատման դեպքում առաջին հերթին կանայքն են կրճատվում: Աշխատող կանայքն ել կուպեկներ են ստանում:

Արտասահմանում ապրող կանայք խոհանոցին ու տաշտին գերի, շարունակ գտնվում են իրենց յերեխաների հետ սովի յենթարկվելու վտանգի տակ: Կիսաքաղց կյանքը սովորական յերևույթ է:

Ինչ խոսք, վոր բուրժուա կանայք, նույնպես իրավագուրկ, բայց փառավոր կյանք են վարում: Նրանք ել իրենց ամուսինների նման պորտաբույծ են և ապրում են բանվորների ու բանվորուհիների հաշվին: Կալվածատերերը, հարուստ գյուղացիք նույնպես ապրում են աշխատավոր գյուղացիների ու գեղջուհիների քրտինքով:



Մանկապարտեզ


Մեզ մոտ այլ է պատկերը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կանայք իրենց իրավունքներով տղամարդկանց հավասարվեցին: Բայց դա դեռևս քիչ է:

«Կանանց լիակատար ազատագրման յե՞վ տղամարդուն իրապես հավասար լինելու համար, պե՞տ է վոր հասարակական և տնտեսական լիակատար արտադրական աշխատանքին մտնակցեն: Այս դեպքում միայն կանայք տղամարդկանց հավասար տեղ կը գրավեն»:

Այսպես է առել ընկ. Լենինը: Վորպես սրա պատասխան, ամեն տարի և ամեն որ խորհրդային Միության մեջ կառուցվում ու բարելավվում են ֆարքիկ-խոհանոցներ, ճաշարաններ, լվացարաններ, մանկապարտեզներ, մանկամսուրներ:

Նորհրդային յերկրի բանվորների 30<sup>0</sup>/0-ը կանաչք են. նրանք աղամարդուն հավասար աշխատում են արտադրութեան մեջ մասնակցում սոցիալիստական շինարարութեանը:

Որ-որի ավելանում է արտադրութեան մեջ աշխատող անգրագիտութեանը վերացնեն, կրոնական սնտախապաշտութեանը զրկենք ունենք բազմահազար բժշկուհիներ, ուսուցչուհիներ, գյուղատնտեսներ, ինժեներներ և այլ մասնագետութեան կին աշխատողներ:



Բանվորուհիներ աշխատում են գործարանում

Նորհրդային Միութեան մեջ ապրող կինն էլ այն չէ, ինչ-չորական Ռուսաստանի կինն էր:

Կինը՝ գյուղխորհրդի նախագահ է:

Կինը՝ կոլտնտեսութեան նախագահ է:

Կինը՝ հարվածային է:

Կինը՝ աղամարդուն հավասար, սոցիալիզմ կառուցող է:

Բայց զեռ ամեն ինչ արված չեն:

Ինուև շատ հետամնաց վայրերում կինը փաստորեն իրավագուրի է:

Մեր առաջավոր բանվորուհիներն ու գեղջկուհիները շատ բան կարող են անել և պետք է անեն, վոր կանանց մի մասի արակտոր դեկավարող, սովորող ու սովորեցնող կանանց թիվներն ու սովորութեանները վերացնեն, փակված կյանքից ազատեն:

Պրոններն ու հոկտեմբերիկներ, դուք պետք է ոգնեք, վոր ձեր մայրերը անգրագիտութեանը վերացնեն, հասարակական աշխատանքներին մասնակցեն, պայքարեն արտադրութեանը բարձրացնելու համար. նրանք աշխատանքի մեծ ասպարեզ ունեն՝ ինչպես գործարանում, նույնպես և կոլտնտեսային դաշտերում:

Յերեխաները շատ բանով մայրերին կարող են ոգնել՝ ընտանեկան կյանքը բարելավելու գործում:

Բանվորուհիներ և գեղջկուհիներ, ձեզ կոգնեն ձեր յերեխաները, նրանք ձեզ ցույց կտան ուսման, նոր կյանքի և սոցիալիստական հասարակակարգի, ուղին:

## ՎՈՐՈՇԻՆՈՎԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՆ Ե

Մի չգիտե հին բուլղերի, կարմիր բանակի հերոս կլիմենտի Յեֆրեմովիչ Վորոշիլովին. բոլորը գիտեն. Բայց շատերը չգիտեն՝ ինչպես է ապրել, հասունացել, սովորել ու պայքարել ընդ Վորոշիլովը: Իսկ դա շատ հետաքրքիր է Իմանանք, վոր մենք էլ նրա նման լավ բուլղերի, սոցիալիզմի կառուցողներ դառնանք:

Վորոշիլովը ծնվել է 1881 թվին, բանվորի ընտանիքում, Սելրախնայի Վերինիյ գյուղում: Յերը զեռ 7 տարեկան էր, ստիպված յեղավ աշխատել. նա սկսեց աշխատել ածխահանքում: Ածխահանքի աշխատանքը շատ ծանր է, մանուկ ածխահանների կյանքն առավել ևս: Շարունակ ածխի փոշի կուլ տալը, արևից զուրկ լինելը վատ է ազդում մարդու զարգացման վրա: Սակայն մանուկ Վորոշիլովն էլ բանվորների այլ յերեխաների հետ միասին ստիպված էր աշխատել Ընտանիքին պետք էր ոգնել:

Ճարական կառավարութեանը մանուկ բանվորների մասին չէր հոգում: Նրանք անգրագետ եյին մեծանում:

Ընկեր Վորոշիլովն ել մինչև 12 տարեկան հասակն անգրագետ եր: Միայն 12 տարեկանից սկսել է գրագիտությունն սովորել: Յերեկը աշխատում էր ածխահանքում, իսկ յերեկոները սովորում էր: Սովորելով և շարունակ բանվորական շրջանում լինելով, նա լավ հասկացավ, թե ինչպես կապիտալիստները շահագործում են բանվորներին: Նա բանվորների մեջ հեղափոխական աշխատանք սկսեց տանել: 18 տարեկան Կլիմը արդեն մասնակցում էր բանվորական գործադուլին և դեկտեմբերում այն: Սրա համար նրան աշխատանքից հանեցին և ձերբակալեցին:



Վ. Վորոշիլով

ձյալ ձերբակալեցին ու բանտարկեցին: Սակայն հազարավոր բանվորներ պահանջում էին նրան ազատել: Ցարական ժամդարմներն ստիպված յեղան նրանց պահանջը կատարել:

1907 թվին նրան ընդհատակյա հեղափոխական գործունեություն համար ձերբակալեցին և 3 տարով ուղարկեցին Արխանգելսկու նահանգ: Սակայն Վորոշիլովը հենց առաջին տարին, այնտեղից փախավ Բազու, ուր թաք կենալով ժամդարմներից, շարունակեց հեղափոխական աշխատանքը:

Վորոշիլովը ռազմական գործը լավ գիտե: Իր փոշ ռազմական գիտելիքները նա ձեռք է բերել բարրիկադներում, ռազմաճակատներում սպիտակների դեմ կռիվ մղելով: 1918 թվի մարտ ամսից նա ռազմաճակատում, վորպես փաշտերի, հրամանատար, կռվում էր սպիտակների դեմ: 1920 թվին նա Ստալինգրադն է պաշտպանում Դենեկինից: Նվիրված

աշխատանքի համար, նա նշանակվում է առաջին հեծելազոր բանակի հեղափոխական խորհրդի անդամ: Ընկեր Վորոշիլովի և ընկեր Բուդյոննու ղեկավարությամբ կարմիր զորքը 1920 թվին գրավում է Ռուստովն ու Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներն ու գյուղերը, ջախջախում է սպաների բանակը և քշում նրանց Սև ծով:



Կարմիր բանակի հերոսական պայքարի պատկերներից մեկը  
Հյուսիսային Կովկասում


Յերբ ընկ. Յրունգեն մեռավ, ընկ. Վորոշիլովը նշանակվեց ռազմական և ծովային գործերի կոմիսար և ռազմահեղափոխական խորհրդի նախագահ: Այսպիսով ընկ. Վորոշիլովը 7 տարի

յե արդեն մեր յերկրի պաշտպանութեան ղեկավարն է: Մարտական մեծ զորքերի համար նա չորս անգամ կարմիր դրոշի շքանշան է ստացել և ստացել է ռազմական ամենամեծ պարգևը—պատվազօր հեղափոխական զինք:


Ընկեր Վորոշիլովը բոլշևիկյան կուսակցութեան ղեկավարներէց է, Կենտրոնական Կոմիտէի և Քաղբյուրոյի անդամ: Նա կուսակցութեան առաջնորդ ընկեր Ստալինի և մյուս ղեկավար ընկերների հետ միասին ուժեղացնում է մեր կարմիր բանակն ու նավատորմը և ԽՍՀՄ-ի սահմանների պաշտպանութիւնն էլ ավելի ամրապնդելով ապահովում սոցիալիզմի կառուցումը:

## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Հյուսիսային Կովկասի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիութիւնը կոմունիստական կուսակցութեան և խորհրդային իշխանութեան ղեկավարութեամբ մեծ հաջողութիւններով թևակոխում է II հնգամյակը:



Գրաֆիկ № 1




Գրաֆիկ № 2

Առաջին հնգամյակը հաղթականորեն ավարտված է չորս տարում և գյուղի սոցիալիստական վերակառուցման դժվարին

աշխատանքներում մեծ նվաճումներ են արված: Յեթե 1928 թվին Հյուսիսային Կովկասում կոլեկտիվացման եր յենթարկված ընդամենը 71.000 տնտեսությունն, ապա այսօր այդ թիվը հասել է 260.761 տնտեսության: Կրիմականում տվարտված են կոլեկտիվացման աշխատանքները: 1928 թվին մենք ունեյինք 113 խորհրդային տնտեսություն, իսկ հիմա՝ 253: (Տես գրաֆիկ № 1):

Այս տնտեսություններն իրենց աշխատանքների մեծ մասը կատարել են բարդ մեքենաներով: Մենք մեր յերկրամասում կառուցել ենք շատ մեծ գյուղատնտեսական մեքենաշինարարական գործարան (Սելմաշ), վորը մեր գյուղերի սոցիալիստական սեկտորը (կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսություններ) ապահովում է մեքենաներով: Մեքենաները գտնվում են յերկրամասի մեքենատրակտորային կայաններում (ՄՏԿ): Յեթե 1928 թվին յերկրամասում ունեյինք 3 ՄՏԿ, վորոնք մեր ցանքսի միայն 0,15% էյին ընդգրկել, 1932 թվին ունենք 275 ՄՏԿ 14.963 տրակտորներով և մշակում են մեր յերկրամասի ընհանուր ցանքսի 82%-ը (տես գրաֆիկ № 2):




Գրաֆիկ № 3

Կոլեկտիվ տնտեսություններն ունենալով այդպիսի տեխնիկական բազա, Լ-ին հնգամյակում կարողացել են մաքսիմալ չափով լայնացնել ցանքսի տարածությունը: Այսպես, որինակ, 1928 թվին Հյուսիսային Կովկասում ցանքսի տարածությունը կազմում էր ընդամենը 9.625 հազար հեկտար, իսկ 1932 թվին 12.708 հազար հեկտար: Գրա մեջ կոլտնտեսություններն ունեցել են 304,7 հազար հեկտար, իսկ ներկայումս ունեն 10,000 հազար հեկտար ցանքս: Խորհրդային տնտեսություններն ունեցել են 77 հազար հեկտար և հիմա ունեն 1.088 հազար հեկտար: (Տես գրաֆիկ № 3):

Այս թվերը ցույց են տալիս, վոր մեր յերկրամասի տնտեսությունները բոլշևիկորեն պայքարել են ցանքսերի լայնացման գործում:

Յերկրամասի սոցիալիստական տնտեսությունները լայնացնելով ցանքաի տարածությունը և մեքենայացնելով աշխատանքը, պայքարել են նաև նրա ապրանքայնությունը բարձրացնելու համար: Յեթե 1928 թվին հացահատիկային ընդհանուր տրտադրանքը կազմում էր 49,263 հազար ցենտներ, 1931—32 թվին մենք ունեցել ենք 69,728 հազար ցենտներ հացահատիկ: Պետական մթերումները 1928—29 թվին կազմել են 10,577 հազար ցենտներ, իսկ 1931—32 թվին՝ 30,573 հազար ցենտներ, (տես գրաֆիկ № 4):



Դրամեկ № 4


Բացի այս քանակական նվաճումներից, ձեռք են բերված նաև զգալի վորակական հաջողություններ: Հյուսիսային կովկասում ցանքաի պլանի մեջ մտցված են շատ նոր ինտենսիվ կուլտուրաներ, վորոնք մինչև այժմ համարվում էին հարավային յերկրների հատուկ կուլտուրաներ: Իրանցից են՝ բրինձը, բամբակը, սոյան, կանչուտը, արախիսը, կորիանդը: Այս կուլտուրաները շատ խոշոր ոգուտներ են ավել մեր յերկրամասի ժողովրդական տնտեսությունը:

Անասնաբուծության մեջ նույնպես ունենք զգալի հաջողություններ: Կոլտնտեսություններին կից կազմակերպված են կաթնապրանքային, թուջնաբուծական, խոզաբուծական և այլն ֆերմաներ: 1928 թվին կոլտնտեսություններում անասունների թիվը 63 հազար էր, իսկ 1932 թվին՝ 1,805 հազար գլուխ: Խորհունտեսություններում 339-ի դիմաց 900 հազար (տես գրաֆիկ № 5):


Աշխատանքի մեջ մտցված են աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ սոցմրցումն ու հարվածայնությունը, վորոնց շնորհիվ զգալի չափով բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը:

Շնորհիվ աշխատանքի ձիշտ բաժանմանը, կոլտնտեսությունների արտադրողական միջոցներն ոգտադործվել են մաք-

սիմալ չափով: Այսպես որինակ, 1928 թվին մի ձին մշակում էր 5 հեկտար ցանքա, իսկ 1932՝ 9 հեկտար (տես գրաֆիկ № 6): Իհարկե դասակարգային պայքարը մեր յերկրամասում չի թուլացել. ավելին՝ կուլակը իր յետևից գնացողների հետ միասին դիմադրում է մեր սոց. հարձակմանը: Նա կուլակային սարտած է կազմակերպում կուլբանում և մի շարք այլ ուսյոն-



Դրամեկ № 5



Դրամեկ № 6

ներում: Կուլակային տարրերը անցյալ տարի բոլորովին չէին ցանել կամ շատ քիչ էին ցանել, բերքն էլ թաղցրել էին ու թույլ չէին տալիս, վոր հացամթերումների պլանը կատարվի: Նրանք գողանում էին կոլտնտեսություն հացը, փչացնում էին կամ գաղտնի ծախում և այլ վնասներ տալիս:

Խորհրդային իշխանությունը կուլակային տարրերի դեմ խիստ միջոցներ ձեռք առավ: Կուլակային սարտածի համար շատ կուլակներ և նրանց յետևից գնացող մենատնտեսներ ու կոլտնտեսականներ արտաքսվեցին մեր յերկրամասից:

Իսասակարգային թշնամու դեմ ուժեղ պայքար մղելով միայն Հյուսիսային կովկասի աշխատավորությունը կարողացավ վերոհիշյալ հաջողություններն ունենալ: Ինչպիսի խնդիր է դրվում Հյուսիսային կովկասի Կոլտնտեսություն առաջ: Ամենից առաջ այդ խնդիրը

բոլորն է կենսական և ժողովրդի «բերքի բարձրացման միջոցների մասին» վորոշումից (29 սեպտեմբերի 1932 թվին), վորտեղ ասված է՝ անհրաժեշտ է, վոր մեր տնտեսությունները ցանքատարածությունները լայնացնելուց անցնեն հողի լավ մշակման և բերքայնություն բարձրացման պայքարին: Հետևապես գյուղատնտեսության հիմնական խնդիրը պետք է համարվի նրա բերքայնության բարձրացումը, աշխատանքի մեջ մտցնելով բարձրագույն ագրոտեխնիկան՝ այն հաշվով, վոր աշխանացորենի բերքը հասնի 14 ցենտների մի հեկտարից, գարնանացորենին՝ 10 ցենտների, յեզիպտացորենին՝ 21 ցենտների:

2-րդ հնգամյակում Հյուսիսային կովկասի մի շարք յեռաշտային ուսյունների վորոգման խնդիրն է զրվում, վոր միջին հաշվով 2,5—8 անգամ բարձրացնելու յե ցանքսի բերքայնությունն այդ ուսյուններում: Վորոգումը կատարվելու յե Մանիչի, թերեքի և կուբանի ջրերն ոգտագործելով: Վորոգման շնորհիվ Հյուսիսային կովկասում լայնանալու յե ավելի թանգարժեք կուլտուրաների՝ բրնձի, բամբակի, կենսաֆի տարածությունը:

Բացի զրանից, յերկրամասի ցանքսի համարյա մեկ յերրորդը պետք է պարարտացվի, վորն զգալի չափով (25—50%) բարձրացնում է բերքայնությունը: Յերկրամասի ՄՏԿ-ներն այնքան պետք է քանակով աճեն և լայնանան, վոր մինչև 1934 թիվը՝ վարը, ցանքսը և բերքահավաքը ամբողջապես բարդ գյուղատնտեսական մեքենաներով կատարվի:

Մեծ ուշադրություն է դարձվելու կուլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման և կուլտնտեսային մասսաների սոցիալիստական վերադաստիարակման վրա, այն հաշվով, վոր ապահովվի «կապիտալիզմի մնացորդների պարտությունը տնտեսության և մարդկանց գիտակցություն մեջ»:

2-րդ հնգամյակում անասնաբուծության բնագավառում խնդիր է զրվում ամբողջապես վերափոխել մեր յերկրի կուլտնտեսություններում յեղած վոչ ցեղային անասունները ցեղայինով, վորպեսզի ապահովեն բարձր ապրանքայնությամբ, այն հաշվով, վոր 1937 թվին ստացված բնգհանուր մթերքը հասնի՝

1. Միսը՝ 525,000 տոննի 1931 թ. 74000 տոննի դիմաց
2. Բուրդ՝ 18,000 » » 6000 » »
3. Չու 1,500,000 հատ

Մենք ձգտում ենք աշխատավոր ժողովրդի կենցաղային դրությունը բարելավել այնպես, վոր 2-րդ հնգամյակում գոր-

ծածված մթերքը 2—3 անգամ բարձրանա առաջի հնգամյակի հանդեպ:

2-րդ հնգամյակի այս խնդիրները մենք կկարողանանք իրականացնել՝ անողոք պայքար մղելով աջ և ձախ՝ թեքումների և ներքին ու արտաքին դասակարգային թշնամիների դեմ:

## «ՆԵՂԱՓՈՒՊԻԹՅԱՆ ԱՆԻՔ» ԿՈՆՏՆՏՆՍՈՒԹՅՈՒՆԸ

(Հ. Կովկաս — Մյասնիկյան ուսյուն)

Լենինական ենք գնում, դիտելու և ծանոթանալու յերկրամասի ու ուսյունի լավագույն կուլտնտեսություններից մեկը — «Հեղափոխության Ալիքը»:

Չյան բարակ ու սպիտակ սավանը ծածկել է Մյասնիկյան ուսյունի գաշտերն ու ձորերը: Դեռ տեղ-տեղ սեխն են տալիս շարքաներկ ակոսները՝ պահելով իրենց կիսալեթմ կրծքում նորացան հատիկները: Որը կամաց-կամաց յերեկոյանում է Դաշտերի վրա իջնում է մշուշը:

Հեռվից հսկում են ՄՏԿ-ի երեկտրալամպերը: Մեր կենսութախ կայտառողեմք սահնակավար Վարդանը հոգատար իր սաննակին, հյուրերին և ձիուն, հմտորեն վարում է ձիու սանձերն ու սլացնում սահնակը ձյունածածկ գաշտերը գոտիող, յերկար ու վոյոյ ուղիով:

Ահա բարձրանում ենք լայներախ ձորի փոքրիկ վերելքով մեկը սահնակից շուտափույթ իջնում է — դա «Հեղ. Ալիքի» նախագահ ընկ. Բառաշյանն է:

Ներքին բուռն հրճվանքով ու համակված նրա հոգատար վերաբերմունքից դեպի լծկան ուժը — հետեվում ենք նրա որիննակին և մենք:

Ահա և Լենինականը: Իջնող մութի հետ ստվերվում են խոտի, հարդի դեզերն ու նրանց մեջ տեղը նորաչեն գոմն ու սիլոսի կիսաշտարակը: Անցնում ենք նորակառույց սպիտակածեփ սնների և «կազմեկյան» ձորակի ափերով: Մեր գեմն է գյուղի կուլտուրական հիմնարկը՝ դպրոցը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ «ՆԵՂ. ԱՆԻՔԻ»

1925 թվին Չալթրից չքավոր-միջակ գյուղացիներ, իրենց հողագույն ձեռքով ու վճռական կամքով, «Ղալմուխ դերեյի»



յերկու բարձունքում կառուցեցին «Ռիկով», «Բեդնյակ» ու ապա «Լենինական» գյուղակները:

Կալմիկյան ձորի ափերին, կոլեկտիվ ուժերով մեծանում են նորաշեն գյուղակները:

Մնվում են առաջին կոլեկտիվները—«Ղարմուխ դերե», «Ափանգարդ», «Տրուղովիկ», «Կրեստյանին» և «Մարս-Պոլե»:

1930 թիվն է—բազմացել են կոլեկտիվիստները, շատացել են նրանց պահանջները, բայց շատ փոքր են կոլտնտեսութունները, անուժ են նրանք առանձին-առանձին—անհաղթ կլինեն բոլորը միասին: Ու մի գեղեցիկ որ ել վճռում են կազմել «Հեղ. Ալիբե» կոլտնտեսութունը:

### «Հեղ. Ալիբե» ՈՐԻՆԱԿԵԼԻ ՅԵ ՌԱՅՈՆՈՒՄ ՈՒ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Հյուսիսային Կովկասի և առանձնապես Մյասնիկյան ուսյոնի առաջավոր որինակելի կոլտնտեսութուններից է «Հեղ. Ալիբե»: Նայեցեք նրա սոցիալական դեմքին. 101 տնտեսութուն, 650 մարդ, 60 տոկոս չքավոր, 40 տոկոս միջակ, և փոչ մի կուլակ, միայն յերեք տուն մենատնտեսական: 17 կուսակցական և կուսթեկնաժու, մոտ 30 կոմյերիտ ու ինչքան, ինչքան հարվածային—ակտիվիստներ:



Հեղ. Ալիբեի մայրաքաղաքի ղեկավար Բառաշյան

Կոլեկտիվ կամքի ու անդուլ աշխատանքի շնորհիվ, «Հեղ.-Ալիբե» հսկայական նվաճումներ ունի աշխատանքի կազմակերպման ու բերքայնության բարձրացման գործում:

Յեվ այն ժամանակ, յերբ յերկրում, ուսյոնում ու նամանավանդ փոչ շատ հեռու՝ Կուբանում, կուլակները սաբոտաժ են սարքում, տատանվող կոլտնտեսականներին իրենց ազդեցություն տակ զցում և թուսալից փափրսուկով նրան համոզում—քարոզում, —թե ցորեն մի ցանի, մի հնձի, մի կալսի, թագցրու և պետությունը մի հանձնի...

Այս, այն ժամանակ, յերբ կուլակն ու հակահեղափոխական տարրերը սե ոճի պես պահվում են ու գալարվում մեր ճամբին և ցանկանում են մեռնելուց առաջ խայթել ու քիչ էլ ապրել—ահա այդ ժամանակ, յերկրամասի բազմաթիվ լավագույն կոլտնտեսութունների շարքին, իր համեստ հասակի

կարգին, խոսք է տրվում «Հեղ. Ալիբեին» և նրա որինակելի նախագահ՝ ընկ. Բառաշյանին:

— Մենք, ընկ. Լենինի պատգամներին և Ստալինի վեց պայմաններին չդավաճանելով, սոց-մրցման սկզբունքով կատարում ենք մեր պլանները:

Կասկածում եք, կամ չեք հավատում—ապա նայեցեք նրանց թվերին: Այդ թվերը հայտնի յեն ամբողջ յերկրին.— խոսքը տանք ընկ. Բառաշյանին:

— Յերկրորդ բուլգարիկյան զարնանացանի աշխատանքներն սկսեցինք հունվարից:

— Հողամասը, լծկանն ու ինվեստարը ամրացրինք բրիգադին:

— 34 ձիով և 2 զույգ յեզներով ցանեցինք 775 հեկտար

—1931 թ. ցանել ելինք 598 հեկտար:

— Բուքսիրի վերցրինք Անդրեյովի և Տագանրոզի կոլտնտեսութուններին:

— Հոկտեմբերի 5-ին հացամթերման պլանը կատարեցինք 100 տոկոսով:

— Կիրառելով ագրո-մինիմումը, բարձրացրինք բերքատվությունը—այսպես, որինակ, մեկ հեկտարից.

	1931 թ.	1932 թ.
Աշնանացորեն	3,94 ցենտն.	9,48 ցենտն.
Փարն. ցորեն	5,5 ցենտն.	5,6 ցենտն.
Յեգիպտացոր.	10,0 ցենտն.	28,0 ցենտն.
Հաճար	9,7 ցենտն.	13,8 ցենտն.

— Մեր հարևան, Միկոյան կոլտնտեսությունը՝ փոխազարձ ոգնություն կարգով տվել ենք 225 ցենտներ սերմացու հաճար (Թող կուլակները կանչեն ճար, ճար):

— Մեր ամեն մի աշխորին հասնում է հինգ կիլոգրամ հացահատիկ:

— Բարնակյան Սարգիսն անցյալ տարի ստացավ 292 ու 2020 կիլո բնամթերք. այս տարի պիտի ստանա՝ 852 ու 3000 կիլոգրամ:

— «Ավարտական տարվա» փոխառություն պլանը գերակատարեցինք 700 ո. սոց-շինարարությունը տվեցինք 5700 ուրլի փող:

— Մեր ԿԱՅ-ը ունի 192 կով՝  
1931 թ. ստացանք կաթ 151.000 լիտր  
1932 թ. ստացանք կաթ 186.500 լիտր

վորէ՞ պետութեանը ծախեցինք 12000 լիտր ու կոլտնտեսա-  
յին շուկայում 32000 լիտր:

— Այսատանքների ընթացքում վոչ մի անասուն չիստակել:  
— Հարվածայնորեն աշխատում եւ «Հարվածային» պատի  
թերթը:

— Դպրոցն ուսուցիչներով ապահովված եւ կազմակերպել  
ենք տաք նախաճաշ, կա քարածուխ, գիրք, տետրակ եւ վոքակ:

— Վորպես առաջնակարգ կոլտնտեսութուն, մենք մա-  
տակարարվում ենք ապրանքներով առաջին հերթին:

— Յես վերջացնում եմ ու կոչ եմ անում բոլոր կոլտն-  
տեսութուններին կանգնել մեր շարքին:

«Հեղ. Ալիքի» կոլտնտեսականների տնտեսական բարե-  
կեցութունը համեմատած նախորդ տարիների հետ՝ բարձ-  
րացել եւ:

Ով լավ աշխատում եւ, նա յեւ բարեկեցիկ կյանք ունի:  
Վորպես որինակ՝ բերենք «Հեղ. Ալիքի» կոլտնտեսական

Սարաբայան Մնացականին. վորի մասին «Գրոհ» թերթը  
1932 թվի դեկտեմբերի 30-ի համարը գրում եւ:

### ՍԱՐԱԲԱՅԱՆԻ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

«...Ներկայումս նրա տանը կան բոլոր անհատեշտ կան-կա-  
կարասիները: Ունի կով եւ 500 քառակուսի մետր հողա-  
մաս անհատական բանջարանոցի համար:

Այս տարի Սարաբայան Մնացականի ընտանիքն իր  
543 աշտորի դիմաց ստացել եւ հացահատիկի ստանալիքի՝  
55 տոկոսը, հաճար՝ 700 կիլո, յեգիպտացորեն՝ 458 կիլո՝  
պամիզոր՝ 126 կիլո, կաղամբ՝ 67 կիլո, սոխ՝ 120 կիլո՝  
կարտոֆիլ՝ 40 կիլո, գազար եւ այլ արմտիք՝ 100 կիլոյից  
ավելի: Իր բակից եւ բոստանից ստացել եւ պամիզոր՝ 20  
փութ, տաքտեղ՝ 1 փութ, կաղամբ՝ 3 փութ: Ստացված  
մթերքներից մի մասը հանել եւ կոլտնտեսային շուկա, վո-  
րից ստացել եւ 200 ու. չափ յեկամուտ: Սարաբայանի ըն-  
տանիքի ամենորոյա ուտելիքները շատ ու շատ անհա-  
տականների նախանձն եւ շարժում»:

Անա «Հեղ. Ալիքի» պերճախոս նվաճումները, վորոնք մի-մի  
ապտակ եւ կուլակային սարտատփին:

«Հեղ. Ալիք» կոլտնտեսութունն իր փորձն ու գործը եւ  
թերութունները չի ծածկում: Նա սոցմրցման եւ կանչել Պետ-  
րովիկի ռայոնի «Զ-րգ պյատիլետկա» կոլտնտեսութեանը եւ պար-  
տավորվել է՝

1. Կովերի կաթի միջին քանակը հասցնել 2000 լիտրի:
2. 1933 թ. բերքայնութունը բարրճացնել 95 տոկոսով:
3. Բոլոր տնտեսա-քաղաքական կամպանիաների խնդիրնե-  
րը կատարել ժամանակից առաջ:  
Նա իր խոսքը կկատարի:

## ՆՈՐ ՔԱՂԱՔ

### ԵԿԱՎՈՒՐՄԱ ԴԵՊԻ ՏՈՒԱՓՍԵ

Հայկական ռայոնի Կուբան-Հայկական դյուղի պիոներները  
քաղաք չեյին տեսել:

Բայց վո՞նց ուզում եյին զնալ ու քաղաք տեսնել:  
Նրանք, ամեն անգամ, յերը լսում եյին հասակավորների  
խոսակցութունները քաղաքի մասին, կամ կարդում եյին քաղա-  
քի կյանքից վերցրած պատմվածքներ ու դիտում նկարներ, ա-  
սում եյին՝

- Անպայման քաղաք պետք եւ գնար:
- Դպրոցի վաշտի հավաքում դրին այդ խնդիրը:
- Ուսուցիչն ել այնտեղ եր:
- Ժողովը շատ ժիր եր: Մեկ լուռ, ուշադիր լսում եյին խո-  
սող ընկերոջը, մեկ ել հուզված աղմկում եյին:
- Յես Չերնիգովսկուց դենը չեմ անցել, յերկաթուղի չեմ  
նստել, ասում եր Զավենը:
- Իսկ յես Չերնիգովսկուսն ել չեմ յեղել:
- Գնանք Մայկուպ:
- Չե, Ռոստով:
- Լավ ե Մոսկվա գնանք:
- Ընկերներ, — խոսք առավ ուսուցիչ ընկեր Յերվանդը, —  
այժմ ձմեռ ե, ցուրտ, ձանապարհը դժվար: Յես առաջարկում  
եմ այժմ նախապատրաստական աշխատանքներ տանել, միջոց-  
ներ հավաքել ե, յերը ուսումնական տարվա պարապմունքները  
վերջանան՝ զնալ Տուլսիսե: Տուլսիսեն մոտ ե, ծախսը շատ չի  
վնի, շատ բան կտեսնենք, ծովումն ել կլողանանք:
- Ճիշտ ե, ճիշտ ե, — բացականչեցին ամեն կողմից:
- Բայց, — խոսեց ողակավար Ագնիվը, — յես առաջարկում  
եմ եկեղուրսիա տանել միայն այն պիոներներին ու աշակերտ-

ներին, վորոնք լավ են սովորում և տարվա վերջին փոխադրվելու յն յն հաջորդ դասարանը:

— Համաձայն ենք, ճիշտ է,— դարձյալ աղմկեց ժողովը: Վորոշեցին ու գործի անցան:

Հաշվեցին բոլոր անհրաժեշտ ծախսերը, դիմեցին գյուղխորհուրդ, կոլտնտեսությունների վարչություններին, կոոպերացիայի նախագահին, ծնողներին, ուսյբյուրոյին:

Նազ անողներ էլ յեղան, «միջոց չունենք» ասացին:

Սակայն վերջում բոլորն էլ համաձայնվեցին ողջնել:

Գործը հաջող էր գնում:

Հունիսի 1-ին հետևյալ խումբը փոխադրվելու վկայական ստացած 40 աշակերտ-աշակերտուհիներ ուսուցչի ղեկավարությամբ ճանապարհ ընկան: Նրանցից վոչ մեկը, բացի ուսուցչից, քաղաք չէր տեսել:

Պետիկն արդեն 5-րդ խմբի աշակերտ էր: Յերբ ուսուցիչն աշակերտներին առաջարկեց շարադրություն գրել, Պետիկը ճայն խնդրեց և ասաց.

— Մենք հունիսին գնացել էյինք եկակուրսիս: Տուափսե քաղաքը տեսանք: Շարադրություն գրենք այդ մասին: Ուսուցիչն իր հավանությունը տվեց:

Գրեցին:

Ամենից լավ շարադրությունը Պետիկի գրածն էր:

Ահա թե ինչ էր գրել Պետիկը իր լսածի և տեսածի մասին:

### ՆՈՐ ՔԱՂԱՔ

Տուափսեն փոխած է Սև ծովի արևելյան ափի մի փոքրիկ ախորշի ափին:

Ով նա յերեք կողմից շրջապատված է լեռներով, իսկ դիմացը բաց ու կապուտակ ծովն է խաղում:

Տուափսեն մեծանում է որ-որի: 1897 թվականին նա ունեցել է 1,400 բնակիչ, իսկ 1926 թվին 12,142. այժմ քաղաքի բնակչության թիվը մոտ 40,000 է:

Տուափսեյի աճմանը նպաստել է 1914 թվին Արմավիր—Տուափսե, իսկ հետո Տուափսե—Սոչի յերկաթուղազիծ անցկացնելը:

Տուափսեյից բանուկ խճուղի կա դեպի Նովորոսսիյսկի Մայկոպ, Սոչի:

Սակայն նրա արագ զարգացումը սկսվել է 1928 թվից հետո, 1-ին հնգամյակի հետ միասին: Գրոզնի—Տուափսե նավթատար խողովակի անցկացումը, նավթաթոր գործարանների

կառուցումը և նավահանգստի վերակառուցումը ստեղծել են նոր կաղափ:

Փոքրիկ ու ծույլ գյուղանման քաղաքը մեռել է: Նրա տեղ ստեղծվել է ժիր, արդյունաբերական ու նավահանգստային քաղաք: Տուափսեն չարչիների քաղաքից վերածվել է արդյունաբերական ու բանվորական քաղաքի:

Առաջին հնգամյակի սկզբից նա նոր կյանք է ստացել: Հյուսիսային կովկասի սոցիալիստական շինարարության նվաճումներից մեկն է նա:


Տուափսեյի գլխավոր զարկերակը նավթաթոր գործարաններն են, վորոնք բանվորական նոր շենով կազմում են առանձին քաղաքամաս—«Գրոզնեֆթ» անունով:

Այս քաղաքամասի սիրտը կրեկինգ գործարանն է: Նման գործարաններ մեր յերկրում ունենք միայն Բագվում, Գրոզնիում և Տուափսեյում: Իրանք բոլորն էլ կառուցվել են ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության վերջին շրջանում: Կրեկինգ գործարանները բարձր ու բարդ մեքենաներ ունեցող գործարաններ են: Նավթ թորելու ամենակատարելագործված միջոցը կրեկինգն է:

Գրոզնու նավթը, չզրտված գրությամբ լայն խողովակի միջով մղվում է ու գալիս է Տուափսե: Այդ նավթատար խողովակն անցնում է նաև Հայկական ուայոնի վրայով:

Կրեկինգ գործարանում նավթից ստանում են բենզին, մազուլթ, հուղրոն, վազելին, պարաֆին, պայթուցիկ նյութեր և այլն: Նավթը բնական դրությամբ քիչ բենզին է պարունակում: Կրեկինգ գործարանում արվեստական կերպով բարձրացնում են բենզինի տոկոսը և նավթից թորում են այն:

Գործարանում աշխատանքի մեծ մասը մեքենաներն են անում: Վտտից մինչև գլուխ դեղին գույնի բանվորական զգեստ հագած բանվորները ղեկավարում ու հսկում են մեքենաներին, մեկ ծորակներն են բաց անում, մեկ փակում են, շերմաչափերն



Նավթաթոր գործարան (կրեկինգ գ.)

են ստուգում և այլն: Աշխատանքը պատասխանատու յե: Բան-  
վորները լուրջ և ուշադիր կատարում են իրենց աշխատանքը:  
Նրանք հարվածայիններ են ու աշխատանքային վոչ մի բոսի  
չեն կորցնում:

Գործարաններից մինչև նավահանգիստը շար ե շար կանգնած  
են խոշոր ու սպիտակ նավթամբարները: Նավթամբարների հրա-  
պարակը ցանցապատած է և հատուկ հսկողութայն տակ է առ-  
նված, վոր դասակարգային թշնամիներից մեկն ու մեկը չփորձի  
կրակ գցել կամ այլ վնաս տալ:

\* \* \*

Գործարանների մոտ, սարալանջով տարածված են բանվոր-  
րական նոր տները: Նրանք շատ գեղեցիկ են ու շրջապատված  
են այգիներով ու ծառաստաններով: Գործարանի վարչությունը  
հոգում է բանվորի և նրա ընտանիքի բնակարանի և այլ հոգ-  
սերի մասին: Մա պարզ յերևում է, մանավանդ, յերբ «Գրող-  
նեֆթի» այդ տները համեմատում ենք «Նախալովկա» հին թա-  
ղամասի հին ու խղճուկ տների հետ:

Ավտոբուսը մեզ հետ տարավ և մենք բանվորական ճաշար-  
անում ճաշելուց հետո, կոմյերիտ նավաստու ղեկավարութայմբ  
գնացինք նավահանգիստ:

Նավահանգստում կանգնած էյին արտասահմանյան նավթա-  
տար շոգենավերը: Նրանց մի մասը արդեն բեռնավորված՝ պատ-  
րաստվում էյին մեկնելու: Շոգենավերի սուլիչները յերեք անգամ  
թանձր ու յերկար սուլելուց հետո, յերեսները դարձրին դեպի  
արևմուտք ու ծանր լողացին: Հերթի սպասող նավերի այլազգի  
նավաստիները ծովային ակմբում խաղում, կարդում ու զրու-  
ցում էյին մեր նավաստիների հետ: Նրանց նավերը մեկնելու  
էյին հեռեկալ որը:

Նավահանգստում կանգնած էր «Աբխազիա» մարդատար  
շոգենավը: Նա մեր նոր, յեռահարկ շոգենավերիցն է: Մենք  
նրա նեղ սանդուղքներով բարձրացանք նավը և դիտեցինք մե-  
քենայական բաժինը, ննջարանները, ճաշարանը: Նավն ուներ  
զրադարան-ընթերցարան, կինո, ուղիտ, զանազան խաղերի տե-  
ղեր և այլ հարմարություններ: Ամեն ինչ կոկիկ ու մաքուր էր:

Յերկու մեծ եկակուրսիաներից հոգնած, մենք նստեցինք  
մոտորավոր մակույկը և, 4 կիլոմետր գնալով, հասանք լողալու  
և արևի լույսնք ընդունելու տեղը (պլյաժ): Նավահանգստում  
լողալն արգելված է, վորովհետև խորն է, ջուրը նավթոտ, լո-  
ղալն էլ վտանգավոր:

Պլյաժում կանայք, տղամարդիկ ու յերեխաներ համարյա  
բոլորովին մերկ՝ արևի լույսնք էյին ընդունում, խաղում էյին,  
լող տալիս: Մենք լողալ չգիտեյինք, այս սլատճառով մեզանից  
ամեն մեկը կապեց կառուչուկե կրծքակալ ու մտանք ջուրը:  
Կառուչուկը մեզ ջրի յերեսին էր պահում, խեղդվելու վախը  
շուտով անցավ և մենք, ալիքների վրա պառկած, խաղում էյինք  
կապույտ յերկնքի տակ, կապուտակ ծովում:

Յերկրորդ որը մենք գնացինք մեխանիկական գործարանը  
և դելֆինի գործարան: Դելֆինը ծովային մեծ ձուկ է (կես  
ձկան ցեղից), վորին վորսում են նրա ճարսլի համար:

Հետևյալ որերը մենք շրջեցինք ամբողջ քաղաքը, տեսանք  
ելեկտրակայանը, տպարանը, ջրմուղը, գուլպայի արհեստանոցը,  
կինո գնացինք մոտակա բանվորական հանգստյան սուենը և այլ  
տեղեր:

Բազմահարկ տները, ելեկտրական լույսը մեզ համար սո-  
վորական դարձան: Մայթերը, փողոցների աղմուկը, գրախանութ-  
ներն ու կոոպերատիվ խանութները, ավտոներն ու կառքերը  
և նավերի ու գործարանների շչակների յերգն այլ ևս անսովոր  
չէյին:

Մեզ ավելի քաջություն էր տալիս մանավանդ, առաջին  
որերին, Տուափսեյի պիոներների մտերմական ընկերությունը:  
Ճիշտ է, մենք շատ դեպքերում իրար չէյինք հասկանում, բայց  
քաղաքի հայ պիոներներից ու աշակերտներից շատերը մեզ հետ  
էյին ու նրանք դժվարն ախաղասություններն ու բառերը թարգ-  
մանում էյին:

Մենք մեր աչքերով տեսանք մեր ռայոնի մոտիկ արդյու-  
նաբերական քաղաքը, լսեցինք, թե այլևս ինչ արդյունաբերական,  
կենցաղային ու կուլտուրական շինարարություններ են կատար-  
վելու Տուափսեյում, այլ քաղաքներում ու վայրերում:

Մենք տեսանք իրագործված հնգամյակի մի պատկեր:  
Եկակուրսիան դեպի Տուափսե մեզ շատ ոգուտ տվեց, շատ  
բան սովորեցրեց:

Հեռվից լսելն ու կարգալը քիչ է:  
Հավ կինի, յեթե ուրիշ դպրոցներն ու վաշտերն էլ նման  
եկակուրսիաներ կատարեն:

Ս.ՇԽԱՏԱՆԻ

1. Բարտեղի վրա գտեք Տուափսեն, վորոչեցեք նրա հեռա-  
վորությունը ձեր գյուղից, քաղաքից:

2. Բացատրեցեք, ինչի շնորհիվ Տուափսեն անեց ու շարունակում է զարգանալ:

3. Ձեր դպրոցում ու վաշտում քննեցեք եկակուրսիա կատարելու խնդիրը և անպայման նման եկակուրսիաներ կատարեցեք:

## ԸՆԿ. ՖՐՈՒՆԶԵՅԻ ԱՆՎԱՆ «ԿԱՐՄԻՐ ԱՔՍԱՑ» ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մոցիալիստական շինարարությունը մեծ քանակությամբ մեքենաներ է պահանջում: Մեր յերկրի ինդուստրացումը՝ նաև այդ պահանջին բավարարել է նշանակում:

Նախկին Ռուսաստանի կապիտալիզմը մեզ վորպես ժառանգություն թողել է խղճուկ մեքենաշինարարություն: Միանգամայն հասկանալի յե, վոր մենք պետք է կոլեկտիվ ուժ գործադրենք սեփական, կայուն արդյունաբերություն ստեղծելու համար:

«Կարմիր Աքսայ» գործարանը մեքենաշինարարական գործարան է: Նա հատկապես պատրաստում է գյուղատնտեսական սեզոնային մեքենաներ:

«Կարմիր Աքսայ» գործարանը կառուցվել է Նոր Նախիջևանում, 1896 թվին, յեղել է ակցիոներական ընկերություն և պատկանել է կապիտալիստներին:

Մրանից տասնյակ տարիներ առաջ գործարանն արտադրել է անգլո-բուլղարական տիպի գուլթաններ և գյուղատնտեսական այլ գործիքներ՝ գլխավորապես Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսության համար:

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ (1914—1918 թ.) գործարանի արտադրանքը զգալի չափով կրճատվում է և հպրմարվում պատերազմի պահանջներին:

— Ի՞նչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, վոր գործարանը գուլթանի, հնձիչ մեքենայի, կախող մեքենայի, տափանի և այլ մեքենաների պահեստի մասեր արտադրելու փոխարեն, սկսում է պատրաստել ռազմական գումակ, արկ, սոճակ և այլ ռազմական պարագաններ:

Իսկ քաղաքացիական կռիվների ժամանակ (1919 թվից—21 թ.) գործարանն այնքան է քայքայվում, վոր 85 տոկոսով կրճատվում է տարեկան արտադրությունը:

Ներկա գործարանը հնին նման չէ արդեն: Գործարանը ներսում ունի 13 հիմնական և 5 ոժանդակ ցեխեր:

Գործարանի ցեխերը կարելի յե բաժանել 3 խմբի.—

ա) Հալոց—ձուլական

բ) Վերամշակման և


գ) Մասերի հավաքման:

Առաջին հնգամյակի սկզբում գործարանն ընդարձակվել է Բերենք արտադրանքի արժեքի մասին վաստական տրվյալներ:

1913 թվին արտադրվել է 2,113,5 հազար ռուբ. ավրանք

26—27 թ. » 4,834,9 » » »

Այստեղից տեսնում ենք, վոր վերակառուցման շրջանի



«Կարմիր Աքսայ»-ը պատրաստում է յեգիպտացորենի կոմբայն

առաջին տարում, 1913 թվի հանդեպ արտադրությունն ավելանում է 229 տոկոսով:

1932 թվին գործարանը, համաձայն իր տարեկան արտադրական ծրագրի, էլ ավելի յե ընդարձակվում, հասցնելով արտադրանքը 25,286 հազար ռուբլու:

Նա պետք է պատրաստի 18,185 հատ մեքենա:

Յերկրորդ հնգամյակում նախատեսված է կրկնակի չափով ավելացնել սարքոցների թիվը և այն էլ նոր ամբրիկական ձևի: Ընդհանուր արտադրանքը 1933 թվին 62 միլիոն ռուբլի յե լինելու, իսկ 1938 թվին կազմելու յե 250 միլիոն ռուբլի:

Գործարանում աշխատում են մոտ 3400 բանվորներ: Կազմի հոսունությունն սկսում է դադարել, աշխատանքի արտադրականությունը բարձրանում է, կարգապահությունը ամրապնդվում է: Ընկ Ստալինի պատմական 6 պայմաններն արմատապես հեղաշրջում են կատարում գործարանի ներքին կյանքում և աշխատանքին նոր ձև, նոր մեթոդներ են տալիս:

Գործարանում վոչ մի անգրագետ բանվոր չպիտի լինի: Այս դեռ քիչ է: Բանվորը վեր սարքոցի վրա յեւ աշխատելիս լինի, նա պետք է տիրապետի այդ մեքենային, հասկանա նրա լեզուն, ուրիշ խոսքով տեխնիկապես գրագետ պիտի լինի: Ահա ներկայիս պահանջը:

Կուլտ-կենցաղային պայմանները համեմատած կապիտալիստական գործարաններում աշխատող բանվորների կենցաղի հետ շատ բարձր է: Նախատեսված է 1932 թվին կառուցել գործարան-խոհանոց 30000 ճաշով: Կառուցվելու յե ընդարձակ բանվորական սկումբ:

Բնակարանային շինարարության վրա խոշոր ուշադրություն է դարձվում: Այդ նպատակի համար բաց է թողնվելու 3 միլիոն 200 հազար ուրբլի, ապահովելով 1500 բանվորների և նրանց ընտանիքների բնակարանային պահանջը: Բնակարանը կառուցվելու յե նոր կուլտ-կենցաղային և առողջապահական պահանջների համաձայն: Ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր միևնույն գիգանտ շենքում լինելու յե մանկական հրապարակ, մանկական պարտեզ, ընդհանուր գործարան-խոհանոց, լողարաններ, ֆիզկուլտուրային դահլիճ, կինոյի դահլիճ և այլն:

«Կարմիր Աքսայի» վերակառուցումն ու արտադրության լայնացումը, բանվորների տնտեսական, կուլտուրական բարեկենցուկյան աճը մեր սոցիալիստական շինարարության նվաճումներից մեկն է:

## ԲԱՐՁՐԱՑՆԵՔ ԾԽԱԽՈՏԻ ՎՈՐԱԿԸ

Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը իրենց մի շարք վորտուներում, գյուղատնտեսական ուսումնասիրի առաջ հարց են դնում զարգացնելու կուլտուրական բույսերը, առանձնապես՝ ծխախոտագործությունը:

Ծխախոտագործությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո էլ ավելի բարձրացրեց իր նշանակությունը մի շարք ուրիշ կուլտուրական բույսերի շարքում:

Ներկայումս ծխախոտագործությամբ պարապում են բացի ցարական կառավարության ժամանակ գոյություն ունեցող ծխախոտագործական ուսումնասիրից, այլ ևս մի շարք նոր, ծխախոտի զարգացման համար նպաստավոր ուսումներ:

Գյուղատնտեսական արտադրանքի մեջ ծխախոտը մեծ նշանակություն ունի, վորպես արտահանվող ապրանք, վորի հանդեպ մեր իշխանությունը կապիտալիստական յերկրներից ստանում է մեզ անհրաժեշտ մեքենաներ:

Յեղնելով այդ գրությունից, մեր ծխախոտագործական ուսումների առաջ հարց է գրվում տալ ավելի լավ վորակի արտադրանք, տիրապետել տեխնիկային և գործադրել ագրոմի-նիմումը:

Ծխախոտի մշակման տեսակները շատ են: Մինչև այժմ հայտաբերված են ծխախոտի մոտ 40 տեսակներ:

Խորհրդային Միության մեջ գլխավորապես ցանում են տաճկական տեսակի ծխախոտներ՝ «Սամսուն» և «Տրապիզոն»:

Սրանք իրենց աճման համար պահանջում են կարճ ժամանակամիջոց՝ 3—4 ամիս (չհաշված 1—2 ամիսը, վորի ընթացքում խնամք են տանում նրանց վրա շերմոցում):

Ծխախոտի արմատները շատ նուրբ են, ուստի հարկավոր է նրանց տալ այնպիսի հող, վորն իր մեջ պարունակի թեթև և լավ սննդանյութեր: Անհրաժեշտ է ծխախոտը տնկել այնտեղ, ուր կլիման մեղմ և տաք է, վորը բարձրացնում է ծխախոտի վորակը:

Մի շարք փորձնական կայանների ցուցմունքներից պարզվում է, վոր աղբը լավ միջոց է ծխախոտի դաշտերը պարարտացնելու համար: Բայց աղբն իր նպատակին ծառայեցնելու համար, վորպես պարարտանյութ, հարկավոր է նրան դաշտ տեղափոխել կամ ձմռան վերջերին, կամ վաղ գարնանը:

Ծխախոտ ցանելու ամենալավ ժամանակը համարվում է մայիսի կեսերից մինչև հունիսի կեսերը:

## ՍԱԾԻՂԱՆՈՑՆԵՐԸ (ՁԵՐՄՈՑՆԵՐ)

Փետրվար և մարտ ամիսներին սկսվում են ծխախոտի աշխատանքները: Այդ ամիսների աշխատանքներից է կախված հետագայի բերքի քանակն ու վորակը:

Փարնանային աշխատանքներին պատրաստ լինելու համար հարկավոր է ժամանակին պատրաստել ջերմոցները: Ջերմոցների տեղը պատրաստելիս, հարկավոր է նկատի ունենալ հետևյալ պայմանները.


1. Տեղը պետք է լինի ջրի մոտ, վորովհետև ծխախոտի սերմերը մինչև ծլելը և մի փոքր մեծանալը (մոտավորապես 1<sup>1</sup>/<sub>2</sub> ամիս) պահանջում են որակյան 2 անգամ ջրել՝ առավորյան և յերեկոյան հովին, յեթե յեղանակն անձրևային չէ:

2. Աշխատել, վորպեսզի ջերմոցները քամիներից ապահովված լինեն:

3. Նախքան ջերմոցներ պատրաստելը, հարկավոր է պատրաստի աղբը ժամանակին այրել, վորի գլխավոր նպատակն է՝ վոջնչացնել աղբի մեջ գտնված միջատներին և մոլախոտերի սերմերը:

4. Հողը հարկավոր է 2 անգամ լավ վարել և փխրունացնել: Ջերմոցները պատրաստելիս պետք է բոլոր աշխատանքները կատարել կոլտնտեսություններին կցված գյուղատնտես-

ների անմիջական ղեկավար ցուցմունքների համաձայն, վորի նպատակն է ճիշտ կատարել բոլոր աշխատանքները: Մածիլանոցները ժամանակին հասցնելուց են կախված հետագա աշխատանքները, վորի համար, արդեն մար-




Միախառնի ապակեծածկ ջերմոցներ

տի վերջերին հարկավոր է ցանել ջերմոցները (միայն տապալյա), Ջերմոցների պատրաստելուց հետո գալիս է սերմերի խորհրբը: Նախ՝ հարկավոր է ցանել միայն այն սերմերը, վորոնք գտված ու առողջ են և ուղարկված են ծխախոտագործական ընկերությունների կողմից:

1 Մինչ ցանելը, հարկավոր է սերմերը լցնել տոպրակների մեջ և թրջել գոլ ջրով ու պահել տաք տեղում 8—12 օր, վորպեսզի քիչ ուռչեն և ծլեր տան՝ հետագայում ջերմոցներում տվելի բարենպաստ կերպով ծլելու համար:

2. Ցանելիս հարկավոր է նկատի ունենալ, վոր ամեն մի յերկու քառակուսի սանտիմետր հողամասի համար բավական է 10—12 գրամ սերմ:

Ցանելուց 8—10 օր հետո ցանկալի յե նույն քանակությամբ այլևս ցանել, վորովհետև վաղ ծրած սերմերը կարող են խխունջներն ուտել և փչացնել, այդպիսով հետագայի ցանվածները կարող են վողջ պահպանվել: Սերմերը ցանելիս հարկա-



Միախառնի սածիլները

վոր է նկատի ունենալ, վոր սերմը կես վերջովից խոր չցանվի, վորովհետև գործնականապես ապացուցված է, վոր դրանից խոր ցանածները նույն տարում չեն կարող ծլել:

Ցանելուց հետո հարկավոր է նշանակել առանձին բրիգադ՝ փորձված կոլտնտեսականներից, վորոնք ամենօրյա խնամք տանեն ջերմոցում:

### ԻՆՁՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ՁԵՐ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Միախոտագործական ուսյունների դպրոցներին հարկավոր է ծանոթանալ բնագիտական դասերի միջոցով կուլտուրական բույսերին, մանավանդ՝ ծխախոտին:

Միախոտի բոլոր աշխատանքներին ծանոթանալու համար, սկսած ջերմոցների պատրաստումից՝ մինչև ծխախոտի մթերումը, հարկավոր է կիրառել հետևյալ միջոցառումները.

1. Բնագիտական դասերի ժամանակ ծանոթանալ ծխախոտի աճեցման և զարգացման բոլոր հարցերին:

2. Կազմակերպել զանազան զրույցներ ծխախոտի մասին, վորոնք կարող են անել ուսուցիչները կամ ծխախոտի գործին հմուտ կոլտնտեսականները:

3. Կատարել ծխախոտի բոլոր գործնական աշխատանքները դպրոցի հողամասում, համաձայն ուսման ծրագրի: Փետրվար—մարտ ամիսներից սկսած հարկավոր ե պարտաստել դպրոցի հողամասում մի քանի ապակեծածկ շերմոցներ: Նախքան շերմոցներ պատրաստելը, հարկավոր ե տեղի դրության, հողի մշակման, մարզերի մեծության և սերմերի վերաբերյալ նկատի ունենալ հորվածում հիշված պայմանները:

Փորձնական հողամասի աշխատանքները պետք ե կատարեն աշակերտները՝ ուսուցիչների անմիջական ղեկավարության տակ, նրանց ցուցմունքների համաձայն:

Դպրոցական հողամասի մարզերը հարկավոր ե որինակելի մշակել և բոլոր աշխատանքներն ել ժամանակին կատարել:

Ծխախոտը պահանջում ե լավ խնամք: Հետաձգել նույն որվա աշխատանքը 2—3 որով, նշանակում ե իջեցնել նրա վորակը:

### ՖԻԶԿՈՒՆՏՈՒՐԱՆ ԱՄՐԱՅՆՈՒՄ Ե ԱՌՈՂԶՈՒԹՅՈՒՆԸ

Մեր յերկրի սոցիալիստական շինարարության համար հարկավոր են ֆիզիկապես առողջ բանվորներ ու գյուղացիներ: Տկար ու թույլ մարմինը չի կարող ախքան/ողուտ տալ, ինչքան առողջ ու ուժեղը:

Խորհրդային իշխանությունը այս հանգամանքը լավ ե հաշի առնում և ամեն ջանք գործ դնում ամրացնելու բանվորի ու գյուղացու առողջությունը:

Աշխատավորության առողջությունն ամրացնելու գլխավոր միջոցներից մեկն ե հանդիսանում ֆիզկուլտուրան: Ֆիզկուլտուրան միայն խաղերով ու մարզանքներով չի վերջանում: Ֆիզկուլտուրան սովորեցնում ե նաև խնամել աշխատավորի առողջությունը՝ ինչպես աշխատանքի ժամանակ, այնպես ել ուտելիս, լվացվելիս, հանգստանալիս և այլն:

Ֆիզկուլտուրան սովորեցնում ե մեզ ինչպես ոգավել ուղից, արեվից, ջրից և լավ առողջ լինել:

Առանց մաքուր ողի, մարդ չի կարող ապրել ու առողջ լինել: Անհրաժեշտ ե որվա ընթացքում բավական ժամանակ լինել մաքուր ողում, հաճախակի փոխել սենյակի ողը: Պետք ե ճիշտ շնչել: Միշտ պետք ե քթով շնչել ե վոչ թե բերանով: Պետք ե միշտ աշխատել խորը շնչել, ավելի մեծ քանակու-

թյամբ ող շնչել և արտաշնչել: Անհրաժեշտ ե, վոր թե մեծերը և թե փոքրերը որը յերկու յերեք ժամ բաց ողում անցկացնեն:

Անմաքուր ողն առանձնապես վնասակար ե յերեխաների համար: Այդպիսի ողից նրանք նիհարում են, թուլանում և դանդաղությամբ աճում: Պետք ե կովել փակված ու անմաքուր ողի դեմ. հաճախակի բաց անել ողանցքը, դուռն ու լուսամուտը: Սենյակում փոշի չբարձրացնելու համար անպայման թաց ավելով պետք ե մաքրել: Սենյակի իրերի վրա կուտակվող փոշին հաճախ պետք ե սրբել թաց լաթով:

Պետք ե քնել կամ բաց ողում կամ ողափոխված սենյակում:

Առողջ լինելու համար պետք ե ոգավել և արեվից: Արևի ճառագայթներն ունեն բուժող ուժ: Ինչպես բույսերը, նմանապես կենդանիներն ու մարդիկ չեն կարողանում լավ աճել, ամրանալ ու առողջ լինել առանց արևի: Հարկավոր ե արեգակի ճառագայթների առաջ ճանապարհ բաց անել դեպի սենյակները:

Արևն ամրացնում ե մարդկանց առողջությունը, ողնում մարդկանց վարակիչ հիվանդությունների դեմ կովելու. նա սպանում ե վարակը, բուժում զանազան հիվանդություններ: Ամառը պետք ե, ինչքան կարելի յե, թեթեվ հագնվել, վորպեսզի արեգակի ճառագայթներն ավելի մեծ չափով մոտենան մարմնին:

Արևից սեվանալը լավ ե. դա առողջության նշան ե: Առողջությունը չվնասելու համար, պետք ե իմանալ արեվի ճառագայթներից ոգավել: Արևի ճառագայթներից պետք ե ոգավել աստիճանաբար, որինակ, արևի լողանք ընդունելիս՝ առաջին որը պետք ե արեվի տակ մնալ հինգ րոպեյից վոչ ավելի, յերկրորդ որը՝ 10 րոպե, յերրորդը՝ 15 և այսպես շարունակաբար ամեն որ 5-ական րոպե ավելացնելով: Սակայն ընդհանուր առմամբ մի ժամից ավելի արեվի լողանք չնդունել: Ընդհանրապես առանց բժշկի խորհրդի՝ արևի լողանք չպետք ե ընդունել:

Առողջության գլխավոր պայմաններից մեկն ել մաքրությունն ե: Մաքուր պետք ե պահել տունը, սենյակը, անկողինը, գործարանը, դպրոցը և այլն: Յուրաքանչյուր աշխատավոր պետք ե մաքուր պահել մարմինը:

Այնտեղ, վորտեղ կեղտ կա, կա նաև վարակ: Չվացկած մաշկը հեշտ ե հիվանդանում: Շաքաթը, կամ գունե յերկու շաքաթը մեկ անգամ պետք ե լողանալ, շորերը փոխել: Ամեն որ յերես լվանալիս՝ լավ լվալ վիզը, ձեռքերը, լավ կլինի



կործքն ու մեջքն ել լվանալ: Ուտելուց առաջ միշտ ձեռները պիտի լվանալ: Պետք է հետեւել ատամների մաքրութեան: Ամեն առավոտ ու յերեկո ատամները պետք է մաքրել խոզանակով ու ատամի փոշիով: Դրանից թե բերանը կլինի մաքուր, թե ատամները լավ կմնան և յերկար կպահպանվեն:

Ճիզկուլտուրայի ամենամեծ պահանջներից մեկն է ամեն բան կատարել կարգ ու կանոնով ու ժամանակին: Ժամանակին պառկել, ժամանակին քնել, ժամանակին անցնել աշխատանքի, կատարել աշխատանքի բոլոր պահանջները: Ժամանակին ճաշել, ընթրել, հանգստանալ և այլն:

Ճիզկուլտուրան կովում է բոլոր ֆիսսակար սովորութիւնների դեմ, հատկապես վոզելից խմիչքներ գործածելու, ծխելու և այլն: Ծխախոտը, ողին, գինին, գարեջուրը և այլ վոզելից խմիչքները թունավորում են մարդու մարմինը, ֆիսսում առողջութեան: Ով ուզում է առողջ լինել, չպետք է ծխի, չպետք է խմի: Վոզելիչ խմիչքներն ու ծխախոտն առանձնապես ֆիսսակար են յերեխաների համար:


Ճիզկուլտուրայի լավագույն միջոցներից մեկն է շարժական խաղերը: Լավ կազմակերպված խաղը, որինակ, գնդախաղ, աչքակապուկի, «գարադկի», և այլն խաղերը մեծ ոգուտ են տալիս: Վատ կազմակերպված խաղը ոգուտի սեղ ֆիսս է տալիս: Խաղը պետք է կազմակերպել բաց ու մաքուր ողում: Խաղի ժամանակ չպետք է թույլ տալ, վոր խաղացողները հոգնեն: Խաղում անպայման պետք է պահպանվեն առողջութեան բոլոր կանոնները: Առողջ խաղերից, թարմ ողից ու շարժումից ամրանում են խաղացողի թոքերը, սիրտը, թարմանում է արյունը:

Ճիզկուլտուրան զբաղվում է և սպորտային պարապմունքներով, որինակ, թիավարութիւնը, լողը, չմուշկը, մազլցումը, նետելը, վաղբը և այլն: Այս բոլորը զարգացնում են մարդու ուժը, ամրացնում առողջութիւնը, սովորեցնում մի շարք տակար գիտելիքներ:

Ճիզկուլտուրան ձգտում է տալ մարմնի բոլոր մասերին հավասար ամրութիւն և ուժեղութիւն, կանոնավոր շնչառութիւն, արյան կանոնավոր շրջանառութիւն, սրտի և թոքերի լավ աշխատանք և այլն:

Այս խնդիրների իրականացման համար, բացի վերև հիշված շարժական խաղերից, սպորտից, մարմնի մաքրութիւնից մաքուր ողից ու արևից, շատ ոգտակար են նաև մի շարք ֆիզիքական հատուկ մարզանքները:

Ճիզիքական մարզանքներն ամրացնում են մարմնի մկանները, նպաստում են մարմնի ուժեղացմանն ու նրա առողջացմանը: Միայն պետք է մարզանքների լավ ընտրութիւն և կատարել և լավ ել անցկացնել: Մարզանքն սկսելիս պետք է մարմնին ճիշտ ձև տալ: Կանգնել ուղիղ, մարմինը պահել ուղիղ, ծնոտը փոքր ինչ իջեցնել, թեկերը ցած թողնել, ձեռները ձգել և կպցնել կողքերին, կրունկները միացնել, իսկ վոքի



Մարզանք

ժայրը հեռու պահել: Ճիզիքական վարժութիւնները պետք է անել միայն մաքուր ողում, բացողյա: Սակայն ձմռանը կարելի չէ նաև լավ ողափոխված և ողանցքը բաց արած սենյակում անել ֆիզիկական վարժութիւններ: Իերենք մի յերկու շնչառութիւնը զարգացնող վարժութիւններ, վորոնք միևնույն ժամանակ նպաստում են մկանունքների ամրացման:

Վարժութիւն № 1: Մարզվողները բարձրանում են վոքի ծայրերի վրա և միաժամանակ ջթով խորը ներշնչում: Այդ ժամանակ ձեռքերը պետք է պարզել դեպի աջ և ձախ, ափերը վերև: Այնուհետև իջնում են ամբողջ ներբանի վրա՝ դանդաղ իջեցնելով ձեռները և արտաշնչելով: Վարժութիւնը կատարվում է 3—4 անգամ:

Վարժություն № 2: Մարզվողները գլուխը դանդաղ շուռ են տալիս դեպի աջ և խորը ներշնչում: Այնուհետեվ ելի դանդաղությամբ գլխին նախկին ձեւին են տալիս և արտաշնչում: Սրանից հետո մի քանի անգամ ել անում են նույն վարժությունները՝ այս անգամ գլուխը դեպի ձախ շուռ տալով:

Վարժություն № 3.— Վոտները միմիայն ցից բաժանելով և մեջքն ուղղելով խորը ներշնչում են: Այնուհետեվ դանդաղ կռնում են դեպի առաջ և առանց վոտները կռացնելու, աշխատում են հասնել վոտների մատներին, միևնույն ժամանակ արտաշնչում են, հետո ել դանդաղ ուղղվում են ներշնչելով և ձեռներն ինչքան կարելի յե դեպի հետ պարզելով: Վարժությունը կրկնվում է յերեք անգամ:

Սիրեցեք Ֆիզկուլտուրան, լավ անցկացրեք Ֆիզկուլտուրայի դասերը և դուք կայտառ, առողջ ու ուժեղ լինելով՝ ափելի պիտանի կլինեք սոցիալիստական հասարակությանը:

**ՄԵՐ ԴՊՐՈՅԸ**

Ընդպարտուսը Սոչիի ուսուցում լալորեն ծավալվում է: Այժմն շկա մի կոլտնտեսություն, վորն իր շրջանում չունենա առաջին աստիճանի դպրոց: Իրանք տարեց-տարի աճելով, աստիճասաբար դառնում են 7-ամյակներ:

Իրանցից է «Կարմիր Պուտիլովեց» կոլտնտեսության յերեխաներին սպասարկող 7-ամյակը, վորն այս տարի նոր է կազմակերպվել և ունի 7-ամյակի 6 խումբ:

1932—33 ուսումնական տարվա սկզբից դպրոցի բոլոր խմբերն ել ունեցել են կայուն դասացուցակներ, ծրագիր և մասամբ դասագրքեր:

Ակտիվ կերպով աշխատում են աշակերտական և պիոներական կազմակերպությունները և նպաստում են աշակերտության կոմունիստական դաստիարակության գործին:

Աշկումի գծով կազմակերպված է աշակերտական կոոպերատիվ, վորը գրենական պիտույքներ՝ թանաք, թանաքաման, գրիչ, գրչածայր, մատիտ, քանոն, կարկին է մատակարարում աշակերտներին:

6 խմբերումն ել կազմված են սոց-մրցման, հարվածայնության պայմանագրեր՝ ուսման վորակի, արտադրական դիսցիպլինայի բարձրացման, կենտկոմի վորոշումների իրագործ-

ման նշանաբանի տակ, և իրար հետ մրցելով, աշխատում են պայմանագրերը ձիշտ և ժամանակին կատարել:

Իպրոցում իր կարգապահությամբ աչքի յե ընկնում 4-րդ խումբը, իսկ աշակերտներից՝ Հակոբ Գասպարյանը, Արիենիկ Առաքելյանը և Նազիկ Մարտիրոսյանը, վորոնք անցած 10 առարկաներից թույլ բոլորովին չունեն և մեծամասնությամբ «լավ» գնահատական են ստացել: 143 աշակերտների մեծամասնությունը պիոներներ ու հոկտեմբերիկներ են, վորոնք ըստ խմբերի կազմում են մի-մի ողակ և իրար միասնալով կազմում են մի վաշտ:



Առաքելյան Արիենիկ

Պիոներները կոմյերիտ բջիջի կոնկրետ դեկավարությամբ պայքարում են դպրոցի արմատական թերությունը վերացնելու համար:

Միտեմատիկաբար լույս է տեսնում պատի թերթը, վորտեղ լուսաբանվում են դպրոցի աշխատանքների, աշակերտական միջավայրի լավ և վատ կողմերի մասին: Կոմունիստական դաշակայրի լավ և վատ կողմերի մասին նյութեր են գրվում, ինչպես որինակ, ինտերնացիոնալ դաստիարակության վում, ինչպես որինակ, ինտերնացիոնալ դաստիարակության արասասմանի պիոներների ոգտին):



Գասպարյան Հակոբ

Բոլոր խմբերն ել մրցման կարգով բաժանորդագրվեցին 4-րդ և վերջնական տարվա փոխառությանը 120 ուրբու և ժամանակից առաջ մուծեցին նշված գումարը: Նրանք գիտակցում են, վոր պետության հանձնված ուրբլիները խոշոր նշանակություն ունեն սոց-շինարարության համար:

Այս բոլորի հետ մեկտեղ, դպրոցն ունի նաև մի շարք թերություններ: Մինչև այժմն աշխատանքային սենյակը կարգի չի բերված՝ ժամանակին գործիքներ ձեռք չբերելու պատճառով, չնայած, վոր գյուղխորհուրդը 1000 ուրբլի յեր հատկացրել դրան: Տաք նախաճաշ կազմակերպված չէ: Ինտերնատ չունենալու պատճառով 5-րդ և 6-րդ խմբերը դասերին լրիվ չեն լինում, և վորպեսզի աշակերտները դեռ չմթնած տուն հասնեն՝ վերջի դասերը կրճատվում են:

Դպրոցը հողամաս չունի, աշակերտական գրադարան չկա և այլն:

Դպրոցի վարչութիւնը, ուսուցիչները, աշակերտական կազմակերպութիւնները և «Կարմիր Պուտիլովեց» կողմնատե- սութիւնն ամեն ջանք գործ պիտի դնեն դպրոցական աշխա- տանքների պայմանները բարելավելու, ուսման վորակը բարձ- րացնելու, դպրոցական բացերը վերացնելու համար:

Այս ուսումնական տարվա վերջին, դպրոցն «Ռուման Հար- վածայնի» միջոցով պետք է մյուս դպրոցներին հայտնի, թե ինչ է արված այդ ուղղութիւնով:


**«ՌՈՒՍՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅՆԻ» № 1-ՌԻՄ ԶԵՏԵՂՎԱԾ ԼՈՒՑԿԻՆԵՐՈՎ ԽԱՂԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**

Վանիկը մեկ լուցկու միջոցով կազմեց յեռանկյունի, լուց- կին դնելով սեղանի մակերեսի անկյուններից մեկին:


Վարսիկը յերկու լուցկու միջոցով կազմեց քառակուսի նույն յեղանակով:

Վանիկը լուցկիներով դարսեց հռոմեական VIII-ը թվա- նշանը, հետո վերցրեց հինգ լուցկի և փոշինչ չմնաց: Այդպիսով ապացուցեց, փոր ու թնից հինգ լուցկի վերցնելով փոշինչ չի մնա:


1. 16 լուցկիներից կազմած 4 քառակուսիներից նույնպիսի քա- ոակուսիներ կարելի յե կազմել այս ձեովով:



2. 22 լուցկիներից խաչաձեով շար- ված 7 քառակուսիներից վերցնելով 6 լուցկի, ստանում ենք 4 այնպիսի քա- ոակուսիներ այս ձեովով:



3. 22 լուցկիներից ստացված 8 քառա- կուսիներից յերկու լուցկի տեղափոխելով, 7 հավասար քառակու սիներ, ստանում ենք հետեւյալ ձեովով:



Ստացված ձեովից վերցնելով յերկու լուց- կի, ստանում ենք 5 քառակուսի հետեւյալ ձեովով:



4. 24 լուցկիներից կազմված 9 քառակու- սիներից վերցնելով 8 լուցկի, ստացվում է յերկու անհավասար քառակուսիներ՝ հետեւ- յալ ձեովով:

5. 9 լուցկիներից շարված կշեռքից 5 լուցկի տեղափոխե- լով, կշեռքը հավասարակշիւ ձեովով կարելի յե շարել հետեւյալ ձեովով:



Անհավասարակշիւ կշեռք



Հավասարակշիւ կշեռք



Սոցիալիզմը հաղթանակում է—Գ. Շառոյան . . . . .	3
Փետրվարը—Բեգրորդով, քարգմ. Բողոանյան . . . . .	11
Դեպի հեղեղներ (բանասանդ.)—Հ. Մազմանյան . . . . .	16
Մարտի 8-ը . . . . .	17
Վերջինովը հարմիր բանակի ղեկավարն է—Մ. Փ. . . . .	21
Հաղթանակի հնգամյակը—Մ. Խաչիկյան . . . . .	24
«Հեղ. Ալիք» կուսնահաստիությունը—Մ. Դալյան . . . . .	29
Նոր բաղաբ (Տուսիս) —Մ. Փիրումյան . . . . .	33
Ընկ. Ֆրունզեյի անվան «Կարմիր Աքսայ» գործարանը . . . . .	38
Բարձրագույնը ծխախոտի վրակը—Հր. Ասախյան . . . . .	40
Ճիզկուլտուրան ամբողջում է աստղությունը—բժ. Հ. Բառայան . . . . .	44
Մեր դպրոցը (Քղթակցություն) —Արտ. Մկրտիչյան . . . . .	48
«Ուսման Հարվածային» № 1-ում զետեղված լուսկիներով խաղերի դասասխանները . . . . .	50

Ростов на Дону, Буденовский проспект № 30  
 Издательство «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»  
 Армянская секция  
 «Ուսման Հարվածային»-ի խմբագրություն



Խմբագրական կոլեգիա  
 Ի. Բ. Պառ խմբագրի՝ Մ. Փիրումյան



Отв. редактор  
 В. К. Цовьян  
 Техн. редактор  
 Г. М. Маргарьян

3017  
 АУ—Х  
 36—46

Сд. в набор 3/II—1933 г.  
 Сд. в печать 16/II—1933 г.  
 Об'ем 3 1/2 листа  
 Тираж 3000 экз.




# ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԵՏԱԳՐԱԿ ՔԱՐՏԵԶԸ

ЖУРНАЛ - УЧЕБНИК  
для III и IV группы  
армянских школ I ст.

11261

Цена 00 коп.

Арм.  
3-5150/2a



Handwritten notes in Armenian script, possibly 'ԿՆԻ' and 'ԳՄՍ'.

Իրգարկա Նախկին

# ՀԵԳԱՄՅԱԿԻ ՀՍԿԱՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

ԳՂԵՅԱՅՈՒԼ  
ԵՌՈՒՐԱԼՍԿ  
ՍԿԼԴԵ

Կրկառ բա քար ճյու



И-во «СЕВЕРНЫЙ КВКАЗ»  
ԳՐԱԳՈՒՆԵՍ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՍՈՍՈՎՈՒՍԿԱ ՓՈՂ. 153  
ՎՊՈՒՆՆՏՐՈՂ (ԱՊՐԵՆԻՍ)

Բ Ա Վ Ա Ն Կ Ա ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առցիակովը հաղթանակում ե—Ք. Շառայան . . . . .	3
Փետրվարը—Բեգրորդով, քարզմ. Բողոքայան . . . . .	11
Դեպի հոկտեմբեր (բանաստեղծ.)—Հ. Մազմանյան . . . . .	16
Մարտի 8-ը . . . . .	17
Վորտիկովը Կարմիր բանակի ղեկավարն ե—Մ. Փ. . . . .	21
Հաղթանակի հնգամյակը—Մ. Խաչիկյան . . . . .	24
«Հեղ. Ալիք» կտանտեսությունը—Մ. Դայան . . . . .	29
Նոր ջաղաք (Տուսիսե)—Մ. Փիրումյան . . . . .	33
Ընկ. Ֆրունզեյի անվան «Կարմիր Աքսայ» գործարանը . . . . .	38
Բարձրացնենք ծխախոտի վորակը—Հր. Ասաֆիյան . . . . .	40
Ճիզկուլտուրան ամբաստանում ե աստղությունը—Բժ. Հ. Բառայան . . . . .	44
Մեր դպրոցը (Թղթակցություն)—Արտ. Մկրտիչյան . . . . .	48
«Ուսման Հարվածային» № 1-ում գետեղված լուցկիներով խաղերի դասասխանները . . . . .	50

Ростов на Дону, Буденовский проспект № 30  
 Издательство «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»  
 Армянская секция  
 «Ուսման Հարվածային»-ի խմբագրություն

Խմբագրական կոլեգիա  
 Ի ռ Ե ղ ա թ խ մ բ ա գ Ր Ի Մ Փ ի Ր ու մ յ ա ն



Отв. редактор  
 В. К. Цовьян  
 Техн. редактор  
 Г. М. Маргарьян

3017  
 Ау—Х  
 36—46

Сд. в набор 3/II—1933 г.  
 Сд. в печать 16/II—1933 г.  
 Об'ем 3 1/4 листа  
 Тираж 3000 экз.

Առցիակցի չարժա  
Փեարժարը—Բեգոր  
Դեպի հոկտեմբեր (ը  
Մարտի 8-ը . . .  
Վերջինովը հարմիր  
Հաղթանակի հնգամյ  
«Հեղ. Ալիք» կորսնա  
Նոր քաղաք (Տուսիս  
Ընկ. Փրուսիայի անվ  
Բարձրացնենք ծխախ  
Քիզկուտուրան ամբա  
Մեր գլխոցը (Քղթակ  
«Ուսման Հարվածայի  
դաստիարակներ

Ростов на  
Издате

«Ուսմ

Отв. редактор  
В. К. Цов  
Техн. редактор  
Г. М. Маргар

Уполкрайлита № Б—4

«Ազգային գրադարան



NL0246570




**ЖУРНАЛ - УЧЕБНИК**  
для III и IV группы  
армянских школ I ст.

11261

9863

Цена 00 коп.

Арм.  
3-5150/2a



181  
910



**И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“**

ԳՐԱԳԱՆՆԱԾԸ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՎԱՍԿԱՅԻ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՒԵՆՏՐ)